

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇԵՏ

Գիտուած է որ նաւարեկութեան մը պարագային նաւաստի ու ճամբորդ շատ անգամ կրնան մեծամասնութեամբ ազատիլ երբ պաղարին մնան, եւ ուղեւորները փրկութիւննին իրարու կարուտէ չսպանն: Աս փորձառութենէն կրնան օգտուիլ ժողովուրդներն ալ: Ուրիշ յօդուածով մը բացատրուեցաւ թէ հայկական դատը խրած նաւերն է, բայց ոչ ընկղմած, կրնանք ջուրին երեսը հանել: Շուտեղով ու ամէն մարդ ինքզինքը պատասխանատուութենէ ազատել ջանալով չէ որ մեր նպատակին պիտի հասնինք: «Մարդ ինչ որ կը բաշէ իր խելքէն է» ըսուած է. աս վճիռը ժողովուրդներու համար ալ ճշմարիտ է. երբեմն երբեմն մեր խելքին քննութեամբը զբաղինք, նախն ազատուը զիրացնելու համար:

\* \* \*

Կ. Պոլսոյ «Լրագիր» թերթը, որուն խմբագիրն էր Նիկողոս Թիւպալանճեան, յունիսի առաւ մը 1876ին մէկէնմէկ հրատարակ նետեց կովկաս հայկական ապրտամբութեան մը ծագումին լուրը: Կովկասեան բարբառով վտեմ ու սրտայոյզ թղթակցութիւն մը կը նկարագրէր Գեղարկ կաթողիկոսին զինուորական պատարագը, վրանի տակ, պատերազմին ճամբարը, ու հայ զինուորներուն ալ հաղորդուիլը, և յառաջխաղացութիւնը հայկական բանակին որուն զուտն էր անցած կովկասի փոխարքայ Միքայէլ մեծ-զուքը, եղբայր Ալեքսանդր Բ կայսեր: Պոլիս աակնուլրայ եղաւ: Ու երբ «Նորագիր», «Հայրենիք», «Մէճմուս» ընկալանելով վաւերացուցին «Լրագիր»ին թղթակցութիւնը, որ նախորդ օրը կասկածի ենթարկուած էր իրենց կողմէն, ալ տարակոյսի հետք չմնաց թէ կովկաս ապստամբած չըլլայ: Օգտէն խոճասարեան «Նորագիր»ին մէջ պատմեց հետեւեալը: Առաուն զուտը բաց կովկասցի երիտասարդ մը խմբագրատունէն ներս նետուած էր, շնչասպառ, յուզեալ. ան պահուն Բօթիէն համուղ շոգենաւն կ'ըլլէր: Բերած տեղեկութիւններն էին — ապրտամբները ութ թնգանթ ունին. Միքայէլ մեծ-զուքը, որ Հայաստանի և վրաստանի թագաւոր պիտի հռչակուի, անձամբ կը հրամայէ հայկական բանակին, հետը ունեւ:

նալով հայ զօրավարները՝ Մելիք Գարեգին, խրիմ Յովհաննէս (միւս անունները հիմա չեմ յիշեր): «Նորագիր» բոցաշունչ հրաւեր կարգաց Թիւրքիոյ Հայերուն օգնութեան հասնիլ իրենց կովկասեան եղբայրներուն սրոնց ապատարութեամբը պիտի ջախջախուէր Ռուսը, եւ Հայ ազգը անգամ մը եւս մեծ ծառայութիւն մատուցած պիտի ըլլար օսմանեան կայսրութեան: Ո՛չ զէնքի պէտք կար, ո՛չ սւանտի. սահմանազլխէն կովկաս անցնելով «Օսմանցի Հայը» հո՛ն հայրենի երկիրը պատրաստ պիտի զանէր հացալիւր շտեմարանները, հրացանի մթերանոցները:

Ռուսական բարախով մօրուսաւոր զէմք մը իբր մեծ-զուքին պատկերը անմիջապէս փորագրուեցաւ: Շուտն, կամուրջին վրայ, Ղալաթիա, լրագրականները լայնաբեռեկ բերնով կը սլոռային՝ «Մըքայէլ մեծ-զուքըս կովկասու, բառուն փարայ:» Հաս մը գնելը հայրենասիրական պարտականութիւն էր: «Նորագիր» յաւելուածով հրատարակեց կատարինէ Բ կայսրուհին խոտասմները Որդութեանց Յովսէփ կաթողիկոսին, ի նպատակ Հայոց: Չմոռցուեցան Երեւանեան արշաւանքը, Աշտարակեցի՛ն եւ Նիքոլա Ա: «Յեղափոխական թուղթերու» վրայ վիշեբային դուժարումի խորհրդաւոր հրաւերներ խրկուեցան աւելն թաղի երիտասարդութեան: Կաղմուեցան «պատեւրագմական յանձնաժողովներ» սրոնց էն կարեւորը Ղալաթիոյ Արամեան պանդուխտ նիստ կ'ընէր: Գեր-յանձնախումբերու պաշտօն արուեցաւ Լոյսի եւ Մէտաժըրիի հետ բուսակցիլ մէկ շարթուան մէջ 40,000 Հայու Պոլսէն Տրուպիզոն փոխադրութեան պայմաններուն վրայ: Թիւրքերը իրենց ծանօթ Հայերը գրկելով, աչքերնին արտասուալիւ կ'ընէին. «Ապրիք, մենք զիւրեքնք որ մեր հաւատարմներն էք. Մոսկովին հախէն պիտի գաք:» Սերպիոյ պատեւրագմին տանին էր, Պուլկարիոյ ինգիրը ծագած էր, եւ մեծ վախ կար Ռուսիոյ կողմէն:

Խանդավառ հայրենասիրութեան վտեմ բուպէին «Մանգումէ» էշէ՛ք միլլէթը կոխեց Հայոց, որ ասանկ ապուշ առատպիւններու կը հաւտային: «Ժողովուրդը» իբր խանը խուճելով բարկածեց «Մանգումէ»ի խմբագրատունը, պիտի սպաննէր «դաւաճան» փանոսեանը որ ծակէ մը կըցաւ փախչել:

Աս միջոցին Պ. Մ. փորթուղայեան Պոլիս վերագարձաւ Թիֆլիսէն ուր քիչ առաջ գացած էր Արժրունին ճանչնալու փափաքով: «Ասիա»ի նախկին խմբագիրը փա-

նոսեանի լաւ բարեկամն էր. հետագրէն իմանալով «Ման-  
զումի»ի պատահածը շտապած էր Պոլիս, տեսնելու թէ  
ինչ կը գտնայ: Հետագիրը թիֆլիս բան մը չէր հազոր-  
ված կովկասի նկատմամբ Պոլիս տարածուած լուրերէն:  
Թիֆլիսէն եկող Պ. փորթուպալեան Պոլիս իմացաւ կով-  
կասեան զեպքերը: Հաւաստեց թէ Ռուսիոյ Հայերը եւ ոչ  
իսկ երագի մէջ ապստամբութիւն տեսնելու յիմարութիւնը  
կ'ընեն:

Գործին զգտնիքը կամաց կամաց երեւան եկաւ:  
Դրամական տագնապի շարաթ մը, «Լրագիր» կը ներ-  
շնչուի կովկասեան ապստամբութեան վէպով մը նեղ վի-  
ճակէ ազատելու փորձը ընել: Աս ապստամբութիւնը  
պատմող թիւը հրատարակելու պէս լրագրամատնե-  
րը մեծ քանակով նորէն կը ինչորեն, 5,000 օրինակ կը  
սպառի, եւ յաջողութիւնը կը շարունակէ ասան մը: Հաս-  
կառնեն միւս անութիւնները. բայց փոխանակ Հայկական  
աւանդութեան հաւատարիմ մնալով իրենց պաշտօնակցին  
հացը կարել տշխատելու, բաւական խելացի կը գտնուին  
ինչպէս բաժին մըն ալ իրենց հանելու, ուստի վաւերա-  
ցընելով կը վաւերացնեն ինչ որ «Լրագիր» հրատարա-  
կած էր: Ասանկ եղբայրասիրական ոգի չեմ գիտեր թէ  
ուրիշ առթիւ երեւան եկած է մեր հանրային կեանքին մէջ:  
Ու հայ ազգը շաբաթներ երկիւղած հաւատքով երկըր-  
պագեց այդ առասպելներուն իբր սրբութիւններու սրբու-  
թեան առջեւ:



Բարձր Հայքի պատուիրակ վահան վարդապետ կով-  
կասէն անցնելով Պոլիս վերադարձաւ 1880ին: Արարատ-  
եան ընկերութեան Գործադիր ժողովին հազարեց թէ Ե-  
րեւանի Հայերը ժամէ ժամ կը սպասեն որ Ընկերութիւնը  
վանի բերդը զրուէ: Այդ ակնկալութեան մէջ Երեւանցի-  
ները մեծակալ զուար մը հանգանակներ են ի նպաստ ըն-  
կերութեան: Վարդապետին պատասխանուեցաւ թէ ըն-  
կերութեան նպատակը կը թուութիւն տարածել էր, ուրիշ ու-  
չինչ:

— Եկո՛ւր ատիկա կովկասցիներուն հաւատացուր:

Յաջորդ տարին Պոլիս եկաւ կովկասցի սպայ Պ. Գրի-  
գոր Նիկողոսեան. իր երկրացիներուն բնաւորութիւնը լաւ  
ճանչցած էր. անոնց եռանդը վառ պահելու համար վանի  
բերդը ինքն ալ առաւ՝ «կոլուս»ի եւ «Պայրասօք»ի խըր-  
կած թղթակցութիւններովը, որոնք թարգմանուեցան  
թիֆլիսի մամուլին մէջ:

Անկէ ի վեր վանի բերդը տարին կամ երկու տարին  
անգամ մը պարբերաբար առինք: Վերջին գրաւումնիս  
1893 զեկտեմբերին տեղի ունեցաւ. սպառազինեալ 20  
հազար Հայ պարսկական օսհամադլիսէն ներս մտնելով  
վանը առին: Լուրը Պոլիս տարածուեցաւ 1896ի առջի  
օրերը. թերեհաւատ գտնուողները հակայեղափոխական եւ  
խրքամուլ հոշակուեցան:



Հայկական խնդրին էն առք առնները, 1894 էն  
ԳՅ, կ. Պոլիս հրճուանքով կը կարգացուէին մեր գասին  
համար լաւատես թերթերը: Ազգասէր Հայերը Եւրոպայէն  
կամ Պոլիսէն պատրիարքին կը խրկէին այդ լրագրոնե-  
րու կտորները եւ թարգմանութիւններ: Հայոց իզձերուն  
չհամապատասխանող լեզու մը գործածելու զժրագու-  
թեան մէջ գտնուող թերթերը արհամարհանքով մէկի կը  
նետէինք: «Թան»ը տարեկան 100,000 ֆրանքի սուլ-  
թանին վաճառուած էր. «Էնտէքանտան Պէլք»ը ամա-  
կան կը ոտանար. «Տէպա»ն փարոսներու ընկերութեան  
շահուն համեմատ կը վարուէր: Մեզի անկարելի էր ըն-  
դունիլ թէ աս եւ ասոնց նման ուրիշ կարեւոր թերթեր  
արտաքին պաշտօնատներու, եւ մասնաւորապէս Ֆրանսայի  
կառավարութեան հայեացքները կրնային պարզել, ուստի  
եւ ասոնց յայտնած կարծիքները իրենց կարեւորութիւնը  
պէտք էր ունենային մեր հաշիւներուն մէջ, որքան որ ալ  
կաշառակերութեան կատկած ծանրանար մամուլին մէկ մա-  
սին վրայ: Ո՛չ ասպաքէն կաշառք նպատակի մը յաջողու-  
թեանը համար կը արուի:



Յիշատակածներս բացառիկ զեպքեր չեն, այլ շատերէն  
մէկ քանին միայն: Վերջին քառօրը գտրուն մեր ազգային  
պատմութիւնը անընդհատ շարունակութիւն է կովկասեան  
Յեզափոխութիւններու, վանի բերդի գրաւումներու, լա-  
ւատեցութեան յարումի: Ինքնախաբէութեան մեր այս  
արտակարգ հակումին մէջ փնտռելու ենք ազգային զրժ-  
բազրութիւններուն բուն պատճառը: Լաւագոյն ապագայի  
մը յոյսը ունենալու գրաւականը իրականութիւնը ճանչ-  
նալու եւ անոր պահանջումներուն համեմատ գործելու մէջ  
կը կայանայ: Մենք սակայն իրականութենէն կը փախ-  
չինք, վասն զի իրականութիւնը կը նմանի մշակութեան  
շատ գծուար հոգի մը. անիկայ արդասաբեր ընելու համար  
յոգնութեան պէտք կայ, մեծ զոհողութիւններ անհրա-  
ժեշտ են: Մենք աւելի կը սիրենք նեղօտեան ափերը ուր  
բնութիւնը ամէն նախապատրաստութիւն տեսած է տարին  
քանի մը հունձք պարզուելու, ափ մը սերմնցանի փոխա-  
րէն. ո՛չ երաշտ, ո՛չ անձրեւ, ո՛չ կարկուտ: Բայց Եզրիպ-  
տոսը բացատրութիւններուն մէջ է. եւ ըստնք նաեւ թէ՛ բնու-  
թեան պարզեւած անաշխատ արդասաբերութիւնը բնիկ-  
ներուն զժբազրութեան պատճառն է դուցէ, վասն զի մըտ-  
քով ծոյլ ըլլած է անոնք, ուստի եւ յաւիտենական սարուկ-  
ներ են փարաւաններէն մինչեւ խափիլերը:

Հայուն անհատական կեանքի բնորոշ բոլոր թերու-  
թիւնները իր հանրային կեանքին ալ հիմերն են: Քիչ  
աշխատութեամբ շատ բան ձեռք ձգել, ահա Հայուն խտա-  
կանը: Օրինակ՝ մեր բոլոր վաճառականներուն մէջ զրժ-  
ուար է գտնել տասնեակ թուով հարուստներ որոնք մաքրի  
ուժով ու ձեռներեցութեամբ բազմա ընկճած ըլլան: Գրե-  
թէ ամենքն ալ յաջող գիպուածի մը պարտական են իրենց  
յանկարծական հարստութիւնը, Արեւելեան կամ Ամերիկ-  
եան պատերազմ մը, նախնային հոգեբու զիւս, կամ

մեծկակ գողութիւններ թիւրք պաշտօնեաներու ընկերակցութեամբ:

Մաքի խոնջէնքը ակորժիլի չէ Հայուն: Գրագէտ Հայը կը միտի թարգմանութեան. գիտել պէտք է, քննել, փրնտառել, խորհիլ, ստեղծել հեղինակութեան համար. Ինչքան շարժարանք մաքի: Գրամատեր՝ Հայուն աչքը վաշխառութեան է. առանց մտաւոր յոգնութեան շահաբեր գործ: Արհեստաւոր՝ Հայը կը շարունակէ աւանդութիւնները առանց նորութիւն մը ներմուծելու գործին մէջ. Ինչո՞ւ միաքը անհանգիստ ընել: Ժամանակակից գիտեալն Հայաստանի երկրագործը օգուտ չէ տեսած. գարբու մշակութեան աւանդութիւնները կը շարունակուին անփոփոխ: Հայը օժտուած է մաթեմատիքայի սքանչելապէս յարմար ըղելով, ու թուաբանութեան ուսուցիչները շատ քիչ են մեր մէջ, եւ սահմանափակ է ճարտարագէտ-երկրաչափ Հայոց թիւը: Մէկ խօսքով՝ բնութիւնը հայ ցեղին պարզեւած է բաց միտք, ու Հայը իր այդ յատկութիւնն օգտուիլ չիցաւ: Մարմնով աշխատասեր, մտքով ծայլ, ահա Հայուն յատկանիշը իր ընդհանուր գծերուն մէջ:

Հայ ժողովուրդը նաև իր ամենամտուար մեծամասնութեանը մէջ գերբնականին կը սպասէ կեանքի շատ մը բարիքները, — յաջողութիւն գործի, բժշկութիւն հիւանդութեան, ամէն բան: Չգինք Հայաստանը, Պոլիս՝ Հայութեան աս «լուսառու կեդրոնը», մեզի մօտաւոր գաղափար մը կուտայ զերբնականին համար Հայուն հաւատարման հոգնութեանը վրայ: Ինչ ահագին բազմութիւններ են անոնք որ կը վազեն Պալատից եկեղեցին, Գարակէօմրիւկ, Արմաշ, Ս. Թադաւոր: Չեմ քննադատեր, այլ միայն կը հաստատեմ:

Իր անհատական կեանքին մէջ մտքով սղերդ, գերբնականին ակնկալու Հայը, քաղաքական կեանքին մէջ չի կրնար լըջամիտ, խորհող, քննող միտք ունենալ: Ուստի երբ անզլիացի երեսփոխան մը Հայաստանի վերաբերութեամբ հարցում մը կ'ընէ կառավարութեան, երբ Պոլիս Ռուսիոյ դեսպանը ծանուցադիր մը կուտայ հայկական գործի մը մասին, Հայը անմիջապէս կ'ողջուի յոյսերով և փրկութեան ժամը մօտալուտ կ'երեւի իրեն: Իսկ երբ «գարնում ենք, թափում ենք, կտորում ենք» կարգայ, սարակոյս շունենար թէ ա՛լ օսմանեան կայսրութեան վերջին ժամը հնչած է:

Մեր գործողութեան էն մեծ պատասխանատուն մեր խելքն է, որուն տկարութիւնները շահագործեցին, ու գեռ կը յուսան շահագործել հողերան բազմախնդիրներ, շնորհի եռանդուն, անշահախնդիր, խանդավառ հաւատացեալներու անձնութեանը: Ու ամբողջ Հայութիւնն ալ խանդավառ հաւատացեալ չէր, քաղաքականութեան մէջ գերբնականին վրայ յուսադիր:

\* \* \*

Հիմա սակայն աւելի մեծ վատնք մը կը սպասուայ մեզի. վհատութիւնը: Եւ ուշադրաւ երեւոյթ՝ Հայաստանի

անկախութեան էն ջերմ հաւատացողներն կը լսուին ազգը շխտող յուսահատութեան վայնասունները. միշտ մաքի միեւնոյն ծուլութիւնը. առանց լուրջ քննութեան կամ շա՛տ լաւատես, կամ շա՛տ յոռետես: Երբեք ճիշդ իրականութիւնը չփնտռել:

Անոնք որ խղճմտօրէն կ'ուսումնասիրեն թիւրքիոյ ներքին եւ արտաքին կացութիւնը, Եւրոպայի շահերը, ու հայ ժողովուրդին դիրքը Օսմանեան պետութեան մէջ, կը համոզուին թէ Հայ ազգին համար լաւ ներկայ մը և լաւագոյն ապագայ մը պատրաստել շատ հնարաւոր է, պայմանաւ որ Հայերը իրականութիւնը տեսնելու չափ քաջահայեաց աչքեր ունենան, իրականութեան պահանջները նկատողութեան առնելու հարկը վերջապէս զգան:

Իրականութեան հանգէպ հաւուր աչքով չմնալու պայմաններէն մէկ քանին յիշեցնեմ:

Տարամերժիլ ամէն խորհուրդ, ծրագիր, յորդորանք որ շուտափոյթ եւ հեշտիւ վայելուի յոյսը կը շողացնէ: Ազատութիւնն ալ բնաշրջումի օրէնքին կը հպատակի: Բնութիւնը յամրընթաց է և կանոնաւոր:

Չգուշանալ խանդավառութեան ներշնչումներէն: Խանդավառութիւնը երեւակայութեան բորբոքումի ու սրտի տրոփումի ծնունդ է. տեսակ մը վտեմ հիւանդութիւն որ տեսութեան յատկութիւնը կը մթազնէ:

Համոզուիլ թէ վտանգաւոր նախապաշարում մըն է կարծել որ ժողովուրդ մը արիւն թափելով միայն կրնայ ազատիլ: Ո՛չ, ատանկ չէ. օրինակ՝ Բոլոնիա, Հէլսնք-Պոսնիա, Կրեմէ, Եւմէն; ու վերջն ալ մենք: Արիւնը ե՛րբ եւ ի՛նչպէս թափելու ճիշդ գիտութեան մէջ է ազատութեան գոնէ հաւանական երաշխաւորութիւնը:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐ

ԱՌԱՋԻՆ ԳԻԽԱՐԿՍ

Պղտիկ աղջիկ մըն էի, կրբոր մայրս օր մը ձեռքէս լսնելով մազերս շոյեց:

Իր տաք շունչը թշերուս վրայ կը խաղար գգուս:

Չեղբերս իրար պլլելէն ետքը որոնք աղաչական կերպ մը առին, այսպէս խօսեցաւ.

— Գնա ըսէ՛ հօրդ որ զլխարկ կ'ուշես: — Կրկնէ՛ նայիմ:

— Հայրիկ, զլխարկ կ'ուշեմ, կ'միմացի:

— Լա՛ւ, պատասխանեց:

Գլխարկս վարդագոյն էր, եւ վարդի մանր կոկոններով գարգարուած, բայց բոլորքէն իջած լայն սպիտակ ժանեակը աչքերուս վրայ իյնալով իս կը նեղէր:

Չղջացի գայն հօրմէ՛ վնդրած ըլլալուս:

ԱՌԱՋԻՆ ՀՈՎԱՆՈՑՍ

Անձրեւ կը տեղար եւ ամպամած մութ երկնքին վրայ վայլակներ օձաձեւ կը վազէին. բայց մայրս նոյն օրը փո-

դոց ելած էր ինծի հովանոց մը գնելու :

Չեղբի մատները իրարու մէջ մտցուցած կ'ազօթէի երկինք նայելով, որպէս զի անձրեւը դադրի եւ մայրս չմոռնայ հովանոցս գնել :

Միջօրէին երբոր սեղան իջայ ճաշելու համար, պնա կիս ժամ երկայն տուի մը գտայ : Իսկոյն հասկցայ որ հովանոցս էր : Աճապարանքով բացի, դուրս հանեցի սպիտակ մետաքսէ հովանոցը կապոյտ մանր ծաղիկներով պարզարուած, եւ զայն պիտու վրայ բռնած սկսայ նազանքով պտտել սեղանին բոլորը . բայց թեւս յոգնեցաւ, եւ նորէն սաստիկ ձանձրոյթ զգացի :

**ԱՌԱՋԻՆ ՉԵՌՆՈՅՍ**

Չափի տօն էր, եւ նոր հագուստներով մօրս սենեակը դացի :

— Ա՛լ բաւական մեծ ես, ըսաւ ան խորհրդաւոր կերպով մը, ձեռնոց դործածելու է :

Սիրտս հրճուանքէ ճխաց :

Սկսաւ մատներս զոյգին մէջ սեղաւորել : Չեռնոցները զեղին էին :

Անհամբերութեամբ՝ ամբողջ ձեռքս մէկանց մտցնել կը ջանայի : Շատ շարժարանքէ վերջ մատներս մէկիկ իրենց սեղը գտան . բայց ինչ նեղութիւն, կարող չէի բան մը բռնել :

Ա՛լ ուրախ չէի :

Ըզձանքներու եւ յուսախաբութիւններու անպարտաւոր յաջորդութեանը մէջ որ կեանքը կը կազմէ, ամէն անգամ որ դէպի ետեւ կը գառնամ, չուկէտին վրայ կը գտնեմ այս երեք պզտիկ տրտում պատկերները, — ու անոնք ինծի երեք սկզբնական կաթիլներու պէս են, որ կեանքին աղբիւրը կը թունաւորեն՝ զեւ իր ակնէն չբաժնուած, Յուսախաբութեան, Չանձրոյթին, ու Յաւին սկզբնական երեք կաթիլները :

**ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՍՎԱՃԵԱՆ**

**ՌՈՒՍԻԱ ԵՒ ՊԱՐՍՎԱՍՏԱՆ**

Ռուսիոյ քաղաքականութիւնը ամէն ծավալանակէ աւելի գործօն է, իրարմէ ահագին հեռաւորութիւններով բաժնուած կէտերու վրայ : Մինչդեռ Չինաստանի մէջ, յանդգնութեամբ մը որ իր գլխաւոր ուժը կ'առնէ Անգլիոյ վարսնումներէն, իր ահեղ թաթը կը դնէ ամբողջ հիւսիսային նահանգներուն վրայ՝ ազահարար տարածեցնելով ուրիշները, յանկարծ կը լսուի որ կարմիր ծովուն մէջ կայք մը ձեռք բերած է, Բահէյդայի պզտիկ սուլթանութիւնը, Օպոքի (Քրանտական) եւ Ասպի (Խաշական) միջև : Այդ ստացուածքով, Ռուսիա կարմիր ծովու հա-

բաւային մուտքին վրայ այնքան հսկողութիւն կ'ունենայ որքան Անգլիա, որ հաստատուած է Բահէյդայի դիմացի եղբրը, Բէրիմ : Ռուսիա Հասկէլիտանի վեհապետին՝ Մէնէլիքի՝ բարեկամութեանը կը պարտի այս նոր երկրաւարութիւնը, որ իրեն բալլիք մը կուտայ Կարմիր ծովուն հարաւային մուտքին :

Ու եւրոպական մամուլը այս յանկարծական իրողութիւնը մեկնելու հազիւ ժամանակ ունեցած, ահա ստիպուած է արձանագրել զրոյցներ, որոնց նայելով՝ Ռուսիա Պարսից ծոցին մէջ կայք մը ձեռք բերելու վրայ է : Միւս կողմէ, կը ծանուցուի թէ Պարսկաստանի Կայսերական Պանքան, որ Պարսկաստանի մէջ անգլիական միակ հաստատութիւնն է, չէ յաջողած իր փոխաստուութիւնը ընելու պարսիկ կառավարութեան : Այդ փոխաստուութեան իբր երաշխաւորութիւն, Պանքան Պարսից ծոցին մաքսատնեւրոն վերին հսկողութիւնը պիտի ստանձնէր, — անգլիական տեսակ մը անուղղակի թեւարկութիւն այդ ծոցին վրայ, որ Հնդկաստանի կը նայի : Ու, աւելորդ է ըսել, Ռուսիոյ ազգեցիկ ընդդիմութեան հետեւանքովն է որ այդ քաղաքական-դրամական դործանութիւնը ի գերեւ կ'ելլէ :

Մեզի համար շատ շահեկան է գաղափար մը ունենալ Պարսկաստանի մէջ ուս քաղաքականութեան ընթացքին վրայ, ինչպէս, որչափ ալ մենէ հեռութուի, կարեւոր է ուշի ուշով հետեւիլ այդ քաղաքականութեան յառաջիադացութեանը՝ այնքան Չինաստանի ու կարմիր ծովուն մէջ, որքան կողմասի սահմանազլիին վրայ կամ Պալքաններուն ստորտը : Քաղաքականութեան մէջ է մանաւանդ որ դէպքերը իրար ու հետ ամենաստեղծ առնչութեամբ կապուած են, եւ Ռուսիոյ քաղաքականութիւնը մեր ճակատագրին վրայ այնքան ամբողջական ազդեցութիւն ունի որ անոր զանազան արտայայտութիւնները մեր կեանքին, կրնանք ըսել, անանջատ մաս կը կազմեն :

\* \* \*

Անգլիացի հրապարակագիր մը, Պրէյլի Հոճէյ, հայկական հարցին նուիրած հատոր մը ունի զոր բոլոր անգլիագէտ Հայերուն կը յանձնարարեմ կարգաւ : Չեմ յիշեր հեղինակ մը աւելի համակիր մեր գաղտին ու ցեղին, յաճախ նոյն իսկ մեզի ի նպաստ կողմնակալութեամբ մը որ սակայն հաճելի փոխարինութիւն մըն է մեզի դէմ լորձնոտուած այնքան անիրաւ գաղտաստաններու : Հոճէյ իր «Հայաստանի շուրջը» գրքին մէջ, Պարսկաստանի համար կ'ըսէ .

«Եթէ երկիր մը իր կառավարութեան ձեւէն գատուելու է, ան ատեն Պարսկաստան աներկալ յուսահատեցուցիչ կերպով ետ մնացած է : Թիւրքիոյ, Ռուսաստանի, Պարսկաստանի մէջէն կատարած ճամբորդութեանս միջոցին, բռնապետութեան երեք աստիճան գտայ . — Ռուսիոյ եւրոպական քաղաքակիրթ բռնապետութիւնը, որ կը ներկայացնէ ընկերական կազմակերպութիւն մը, տակաւին շատ նախնական ձեւի մէջ, բայց շատ աւելի զարգացած քան կիսավայրենի թիւրքիան, ուր բռնապետութիւնը

նողկալի է, բայց ուր սակայն կառավարութիւնը կազմակերպութիւն մը ունի գտնէ: Պարսկաստանի մէջ սակայն, կը գտնենք կառավարութեան բարձրագոյն նախնական ու անկազմ ձեւ մը, արեւելեան բռնապետութեան ամէնէն ստորին տիպարը:»

Երբ մարդ կասպից ծովէն Պարսկաստան կը մտնէ, անմիջապէս աչքին զարկած իրողութիւնը սա է որ իր կուսած երկիրը անուանապէս Շահին՝ բայց իրապէս Ռուսիոյ իշխանութեանը տակ է: Ռուսական զրօշակն է որ կը ծածանի Էնզէլի վրայ, մինչդեռ կասպից ծովուն մէջ պարսիկ զրօշակը անհետացած է: Երբոր 1889ին Նասրէտին Շահը կասպից ծովէն անցաւ իր զբօսանաւով՝ Պաքու երթալու, ռուսական թնդանօթակիր մը սպանաց կրակ ընել՝ եթէ իր զրօշակը վար չառնէ, եւ զբօսանաւը հարկադրուեցաւ համակերպիլ:

Բիր-փազար, Մուրղապի շամբուա լճին վրայ, և Բէշլ, ամէն բան ռուսական հով մը ունի, եւ Ռուսիայէն դացած Հայերն են զխաւարարար որ ռուս բազաքակրթութեան յառաջապահներն են հոն եւ միջնորդները ռուս վաճառականութեան: Բէշլի մէջ, ռուսական հիւպատոսին բնակարանը ձշմարիտ պալատ մըն է, եւ հիւպատոսը պատուակալ պահակախումբ մը ունի, տաններկու հեծեալ խազախներէ բազկացած, եւ սառաւորաթիւ պաշտօնէութիւն մը, այնպէս որ իր տուն-տեղը՝ պատիկ Ռուսաստան մըն է Պարսկաստանի մէջ:

Իբր տասը տարի առաջ, Դարէթի ռուսական ընդհանուր հիւպատոսը Պարսկաստանի գրաւման մասին իր՝ կառավարութեան ուղղած մէկ գաղտնի տեղեկագրին մէջ, կարծիք կը յայտնէր թէ խազախներու զօրագունդ մը բաւական է ամբողջ Պարսկաստանի տիրելու համար: Բայց խազախներու զօրագունդին երեւնալէն առաջ, Ռուսիա անդու կ'աշխատի երկրին իրապէս տիրել, իր յարմար գատած պահուն՝ կարելի եղածին չափ նուազ զոհողութիւն ունենալու համար ընելիք: Ամէն քաղաքականութեան պրօբլէմն է ստիկա: Հիւսիսային Պարսկաստանի մէջ ամէն բան Ռուսիա կը հայթայթէ. ռուսական սամաւորը ամէն պարսիկ ընտանիքի մէջ է, եւ սամաւորն ու թէյը Ռուսիայէն կուզան. ռուսական կահարասին, ռուսական բամպակեղէնը, ռուսական կօշիկները, ռուսական թամբերը ամէն կողմ են: Զուկի տեւտուրը ռուսական մենաշնորհ մըն է իրօք:

Ռուսիոյ համար սակայն ճամբայ պէտք է՝ Պարսկաստանի մէջ առաջ քաշելու համար ուղած ատենը, եւ բոլոր հոգածութիւնը ատոր նուիրած է: Զօրավար ֆուրաբազբին որ, եթէ չեմ սխալի՝ 1894ին, թէհրան գացած էր, Բեղրպուրի զարձին ձարին ուղղած տեղեկագրին մէջ կը յանձնարարէր նաւահանգիստ մը շինել Էնզէլի, եւ երկաթուղի մը՝ Բիր-փազարէն մինչեւ Բէշլ եւ յետոյ մինչեւ թէհրան: Ասիկա ծրարին մէկ մասն էր սակայն: Էնզէլ-Բէշլ-թէհրանի գիծը շինուած ատեն, ուրիշ գիծ մը շինելու էր կարսէն Երեւան, Զուղա, Դարէթ, թէհրան, եւ յետոյ շարունակելու էր զայն մինչեւ Պուշիք, Պարսից ծոցին վրայ:

Այսօր, կովկասի թերթերէն կը տեղեկանանք որ կարսէն Երեւանի երկաթուղին, որ սկզբնաւորութիւն մըն է լոկ, նախնական աշխատութեանց ձեռնարկուած է արգէն: Միւս կողմէ, Բէշլէն մեկնող ճամբան, ռուս ճարտարագէտներու հսկողութեան ներքեւ, արգէն աւարտած կրնայ նկատուիլ: Ճամբան այն կերպով շինուած է որ ի պահանջել հարկին երկաթ գիծերը կարելի է հաստատել առանց գծուարութեան: Առաջ, ճամբան գրեթէ անանցանելի էր գէշ օգիւրուն, բանակի մը պարենաւորումը գրեթէ անկարելի, եւ լիրան շատ թեթեւ թնդանօթներ միայն կարելի էր անցընել խարզանի կիրճին վրայէն, ան ալ ջորիններու վրայ բեռցած, կտոր կտոր: Այսօր, մէկ քանի ժամուան մէջ, հազարաւոր զօրք կրնան թափիլ պարսկական գաշար, թէհրանի 100 մղոն մօտ, առանց ուրիշ գծուարութեան բայց եթէ երկաթ գիծերուն տեղաւորումը որուն համար ճամբան արգէն պատրաստուած է: Ու գործը կատարուած է այնքան անշուշտ որ մինչեւ հիմակ զրեթէ աննշմարելի անցած էր:

Հիւսիսային Պարսկաստանի վրայ ռուսական ազդեցութիւնը այնքան ուժով ստք դրած է որ Անգլիացիները կը խոստովանին թէ ա՛լ աւելորդ է յօգնիլ, կորսուած գետնը ձեռք բերելու: Անգլիա, հիւսիսային Պարսկաստանը Ռուսիոյ թողլով, այժմ կը նկրտի գտնել իր ազդեցութեան շրջանակին մէջ պահել հարաւային Պարսկաստանը:

Բայց Ռուսիա՝ գոհանալ զիտցող մրցակից մը չէ: Ազատ ծով պէտք է իրեն, ստքի ամուր կուսան մը Պարսից ծոցին մէջ, եւ առօր կը ձգտին հիմայ իր բոլոր ջանքերը: Պարսից ծոցին էն մեծ նաւահանգստին, Պուշիքի, վաճառականութեան հարիւրին 80ը եւ ամբողջ ծոցին վաճառականութեան հարիւրին 73ը Անգլիացիներու ձեռք են: Բայց Պուշիք եկած ապրանքները գէպի երկրին ներսը զրկելու համար լեռնոտ երկրէ մը անցնելու է մեծ զբօսարութիւններով: Ռուսիոյ զիտաւարութիւնն է նաւային կայք մը ձեռք բերել Պուշիքէն բիշ մը աւելի վեր, ու իրեն քաշել Պարսից ծոցին ամբողջ առուարը, մանաւանդ որ արգէն Համաստանէն մինչեւ թէհրան լաւ ճամբայ մը շինուելու վրայ է Գերմանացիներու ձեռքով: Ասիկա ճամբան պիտի բանայ Բէշլ-թէհրան-Համաստան-Պարսից ծոց երկաթուղին:

Անգլիական թերթերը կը մոլտան արգէն, ու կը հարցընեն թէ անգլիական կառավարութիւնը ի՞նչ ընել մտադիր է թող չի տալու համար Ռուսիոյ երեւումը Պարսից ծոցին մէջ: Ոմանք այնչափ առաջ կ'երթան որ բաց է ի բաց կը յայտարարեն թէ Անգլիա պէտք է ի հարկին պատերազմ բանայ, քան թէ թողու Ռուսիոյ ստք գնել Պարսից ծոցին մէջ:

Ոչ ոք կրնայ գուշակել գէպերուն ընթացքը: Բայց տարակոյս մի ունենաք որ Ռուսիա պիտի հերքէ Պարսից ծոցին մէջ երկրակալութեան ու եւ է խորհուրդ ունենալը, ինչպիսի պիտի հանդարտի՝ գտնէ զուրսէն զիտոզներուն համար, եւ վեց ամիս վերջը, տարի մը վերջը, երբ որ յարմար գատուի, լուրը նորէն պիտի պայթի, այս ան-

գամ աւելի ծանր: Մտքերը այսպէս կը վարժին քիչ քիչ՝  
օր մըն ալ ա՛լ չըմբոստելու համար կատարուած իրողու-  
թիւններու առջեւ:

Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ սքանչելի մենամարտի մըն  
է որ հանդիսատես կ'ըլլանք աշխարհի ամէն կողմը: Ո-  
րո՛ւն պիտի մնայ յաղթանակը:

Մեզի գալով, կը փափաքէի որ Պարսկաստանի Հա-  
յերը, անոնք որ պատասխանատուութիւն մը ունին իրենց  
պարսկալոսակ հայրենակիցներուն ճակատագրին վրայ,  
աչքէ չհեռացնէին իրենց բնական երկրին շուրջը զարձող  
այս բոլոր պարագաները:

1. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

Տ Ա Ր Ե Դ Ա Ր Զ

Պուրիս շրջեղութեամբ հանդիսակատար  
թընդանօթի խորունկ ձայնէն կ'որոտար:  
Խուզ բութիւն կը թօթվէր քաղաքը բոլոր՝  
ինչու որ դահ կ'ելլէր ահա սուղան նոր:

Կարծես երամ երամ կը ծածանէին  
Անհամար դրօշակներ թըռչմամբ օդային:  
Ամբիւր կը ցընծար, « կեցցէ » կը պոտար:

Սակայն սուղաններու սպիտակաշար  
Ծովածուս պալատներն՝ որ լուրթ հովանի  
կը տարածեն ամանց վըրայ գեղանի՝  
Երազալից, խոհուն կ'երեւնային, լուռ.  
Քանզի նոր պատահեր էր ոճիր անլուր:

Նըւիրական թաղէն ահա կը դաննար  
Ապտիւլ-Համիտ, փոշի կտորը կ'ամբառնար  
Եւ խանգալառութիւնն անբաւ ամբոխին:  
Խնդութիւնն էր անչափ թըմբկին եւ փողին:  
Ան թուր մէջըը բաշած էր իշխանութեան,  
Կ'երթար բազմիլ հիմայ ամոռ վեցդարեան:  
Մեծամեծներն առջին տէրութեան անհուն  
Պիտի գային ընել խոր խնարհութիւն,  
Դրօշակը համբուրել անոր լօպիկին,  
Հաշտել ամբարտաւան, կասկածոտ հոգին:  
Խորը յառաջացաւ դահլըճին շըքեղ  
Ուր գահը կը կանգնէր. բայց նըստած այդտեղ  
Ուրուական մը տեսաւ ազօտ եւ դաժան.  
Աչերն էին փորած եւ նորանըշան  
Ակնարկութեամբ երեսն ի վեր կը նայէր:

Ապտիւլ-Համիտ սոսկաց — սակայն կ'երկրայէր:  
Հոգ իր տեղը նըստած էր Մահը խոժոռ.  
Եւ Մահը շըշընչեց՝ Ես եմ թագաւոր:

Վ Ա Հ Ր Ա Մ Ս Վ Ա Ճ Ե Ա Ն

Հ Ա Յ Ց Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ

ԿԵՐՊԱԲԱՆՈՒԹԻՒՆ, ԵՒ ՄԱՐԴԱԶԱՓՈՒԹԻՒՆ

Հայկական տիպարը նկարագրելը շատ դժուար է, ու-  
րովհետեւ այնքան խանուրդ ունեցած է այս ժողովուրդը  
եւ խանուրդներու արդիւնքը այնքան տարբեր եղած է  
զանազան երկիրներու մէջ, որ այդ տիպարին վրայ գաղա-  
փար մը կազմելու համար անպատճառ պէտք է որ այլևայլ  
տեղերու մէջ առնուած միջիններու միջինը առնուի:

Քանիքով, առաւ Գամբուրը, կը կարծէ որ Ասորախանի  
Հայերը միայն պահած են հայկական բուն տիպարը, եթէ  
բունն ալ չըլլայ, գէթ այն տիպարը զոր Հայերը ունէին  
Մոսկովիներու արշաւանքէն առաջ: Ասորախանի Հայերը,  
որոնք ՃԳ վարու Անիի գաղթականներն են, կրցած են  
պահել իրենց ճշմարիտ տիպարը, երկար վարեր հեռու  
մնալով մահմետական եւ ուրիշ օտար ցեղերու ազդեցու-  
թեանէն: Իսկ Պ. Շանդըր, ընդհակառակը, կը կարծէ որ  
Ասորախանցիներու տիպարը հեռու է Հայերուն մեծա-  
մասնութեան տիպարը ներկայացնելէ: Իր ըրած գննու-  
թիւնները բացայայտ կը հաստատեն այս իրողութիւնը եւ  
նկատուի կուսան թէ Քանիքովի Հայերուն վրայ շինած  
նկարագիրը շատ վիճելի է:

Տեսնենք նախ թէ ի՞նչ կ'ըսէ սուս Գամբուրը Հայե-  
րուն վրայ.

« Հայերը բարձրահասակ եւ լուր կազմուած են, բայց  
յաճախ զիրնալու ենթակայ: Գլխի ձեւը որոշ կերպով ի-  
րանեան եւ երկայնագանկ է (dolicocephale) (\*), աչ-  
քերնին սեւ ու խոշոր, բայց պարսիկներու աչքէն աւելի  
ակնակապիճին մէջ մտած են. ճակատին ցած. քիթեր-  
նին զրեթէ առանց բացառութեան շատ ցցուած, շատ ար-  
ծուային եւ շատ երկայն են: Դէմքի ձուածիրը աւելի եր-  
կայն է քան Պարսիկներունը: Մորթը ճերմակ է եւ փա-  
փուկ զեռատիներու քով, բայց տարիքին հետ երկու սե-  
ռին մէջ ալ կը կոշտանայ: »

Յաջորդ տղերուն մէջ պիտի տեսնէք որ Քանիքովի  
այս կարծիքը Պ. Շանդըրի գննութիւններուն տուած ար-  
դիւնքին հետ բոլորովին չի պիտի համաձայնի:

Ֆրանսացի անուանի ազգագիրը իր քննութիւնները

(\* ) Երկայնագանկ կը կոչուին այն զլուխները որոնց  
գանկը գագաթէն զիտելով հակաթաձեւ է. ամէնէն մեծ  
երկայնութիւնը ամէնէն մեծ լայնութեան հետ կը համե-  
մատի ինչպէս 9 առ 7. գանկին շրջագիծը ծայրատուած է  
առջեւէն եւ աւելցուած է ետեւի կողմը ենթագանկի (occipi-  
tal) ցցուած մասով մը: Արտեւանունքի ցցուածները շատ  
որոշ են: Գերման, Սկանտինաւ, Լատին, Վրացի, Նու-  
պիացի, Եթովպացի, օրինակի համար, երկայնագանկ  
ազգերուն կը վերաբերին:

կատարած է 341 հոգիի վրայ, որոնց 44ը կին, 23 զանազան կեղրոններու մէջ, 9ը Ասիական թուրքերոյ և 16ը Անգլիոյ/կասի մէջ: Այլ գննութիւնները, որոնք թէեւ կատարուած են այնպիսի կեղրոններ ուր Հայերը շատ հին ժամանակներէ ի վեր բնակած են, կը ցուցնեն սակայն որ հայկական տիպարը հետո և համասեռ ըլլալէ. տարբերութիւնը տեղէ տեղ խիստ մեծ է եւ քաղաքական անկատար վիճակը քանի մը կէտերու վրայ ազդային նկարագրերը բարոյական փոխած է:

Ա. Մ ա զ եւ ա չ ք. — Ընդհանրապէս Հայերը թուր մազ ունին: 341 հոգիի վրայ 194 սեւ մազ, 109 կաստանագոյն եւ միայն 38 խարտեաշ տեսնուած են: Ամէնէն թուրերը կը գտնուին Ազալիս, Նոր Պայտազիա եւ Թիֆլիզ, յետոյ Ախցիա, Երեւան, Եզդիստ:

Կատարանագոյնները կը գտնուին 32 0 0 համեմատութեամբ ամէնէն աւելի Շուշիի, Գարա-Քիլիսէի մէջ:

Խարտիշահերները շատ քիչ են, մանաւանդ կանանց մէջ: 297 էրիկմարդոց մէջ 37 խարտիշահեր գտնուած են, այսինքն զրեթէ 13 0 0, եւ 44 կանանց մէջ միայն 1 հաս, այսինքն 2 0 0 էն քիչ մը աւելի:

Մազերը ընդհանրապէս ուղիղ են, զանգրահերները խիստ քիչ են:

Հայերը մեծ մասամբ սեւաչուի են. համեմատութիւնը զրեթէ մազերուն հետ նոյնն է, 192 սեւ, 113 կաստանագոյն եւ 36 կապոյտ աչուի: Պ. Շանդրի գննութեան տարիկայ եղող 44 կիներէն միայն մէկը կապոյտ աչուի է:

Դիտելու արժանի է որ հակառակ այն երկար շփումներուն զորոնք Հայերը ունեցած են թուրք-մանկալ ցեղերուն հետ, իրենց աչքերը երբեք չեն ներկայացներ այդ ցեղերու յատուկ շեղութիւնը և եզերքի նեղութիւնը: Ընդհակառակը Հայերուն աչքը խոշոր բացուած եւ լաւ ճեղքուած է: Հայուհիներու նշաձեւ թուր աչքերը, որոնք սքանչելի յոնքերու տակ ծածկուած են ու խոշոր արանւանունքով կը բոլորուին, աշխարհի ամէնէն հիանալիներն են: Թուր և առատ մազեր զրեթէ ամէն Հայուհւոյ տարբերն է:

Բ. Քիթ, բերան, ախանջ, երես. — Հայերուն զրեթէ 38 0 0 համեմատութեամբ ուղիղ եւ վայրահակ է, իսկ 42 0 0 համեմատութեամբ կոր եւ վայրահակ: 341 հոգի իբր զթի նշանակ (indice nasal) (\*) ընդհանուր միջին կուտան 64, 81: Բայց երբ այդ միջինը փնտոնք զանազան խումբերու վրայ իրարմէ շատ տարբեր արդիւնքներու կը հասնինք:

(\*) Մարդաբանութեան մէջ նշանակ (indice) ըսելով միշտ քանորդ մը կը հասկցուի. օրինակի համար զթի նշանակը գտնելու համար անոր լայնութիւնը կ'առնեն զոր 100ով կը բազմապատակեն և բարձրութիւնովը կը բաժնեն. այսպէս ենթադրենք թէ զթի մը լայնութիւնն է 35 միլիմետր եւ բարձրութիւնը 54 մմ. այդ զթին նշանակը կ'ըլլայ  $35 \times 100 / 54 = 64, 81$

Այսպէս Նախընտանի խումբը կուտայ 38, 61  
Շուշիներ 70, 37

Հայերը իրենց առած զթի նշանակովը կրնան զատուիլ ուրեմն նրբաքիթերուն (leptorrhinien) (\*\*) մէջ, սակայն պէտք է նկատել որ այս նրբաքիթութիւնը յատուկ կուտայ ոչ այնչափ զթի ծակերուն նեղութենէն, որքան զթի բարձրութենէն: Հայերը իրենց զթի նշանակովը կը մտահանան Ֆրանսայի հիւսիսային կողմի բնակիչներուն եւ Ափրիկէի ֆապուլներուն, որոնց նշանակը 63 66ը չանցնիր:

Հայերուն բերանը աւելի փոքր է քան մեծ միջին լայնքն է 47 մմ. կիներուն քով 45, արանց քով 48: Շրթունքները ընդհանրապէս բաւական նուրբ, ախանջերը սքանչելի կերպով կանոնաւոր են: Ախանջները աւելի խոշոր են քան մանր, միջին երկայնութիւնն է 60 մմ. եւ լայնութիւնը 35. քանի մը տեղեր ախանջները ընդհանուր միջինէն շատ վար են և կիջնան մինչև 55 մմ: Այս փոփոխութիւնը Պ. Շանդր կը վերագրէ բաբախի սովորութեան որ կ'ալլափոխէ ախանջին վերի բլրակը եւ կը կարծցնէ զայն մինչև իր 1 3 երկայնութիւնը:

Հայերուն երեսը թէեւ տեղէ տեղ կը փոխուի, բայց կրնայ ըսուիլ որ աւելի լայն է քան նեղ: 341 հոգիի միջին երեսի նշանակն է 100, 72 (մարդիկ 100, 70, կիները 103, 10): Ամէնէն երկայններն Հայերը կը գտնուին Տիլ (95, 74), եւ ամէնէն կարճերեսները Միկրի (108, 94): Նկատելի է սակայն որ այս կարճերեսութիւնը աւելի աւերելոյթ է քան իրական. սակարի վրայ առնուած չուփերը ուղիւն վրայ առնուածէն տարբեր արդիւնք կուտան. այդ կեղրոններու Հայերը զունչ չունին և ասոր ալ պատճառը զլիսակապի յոսի սովորութիւնն է, այնպէս որ երեսնին չափազանց կարճ կ'երեւայ: Էրիկմարդոց տուած նշանակը այս դիտողութիւնը լիովին կը հաստատէ, վստն զի էրիկմարդոց քով այս թիւը շատ քիչ անգամ 103ը կ'անցնի. ինչ որ ալ ըլլայ սակայն Հայերը ընդհանրապէս կարճերես են:

Գ. Հասակ. — Հայերուն հասակը միջինէն վեր է ընդհանրապէս, 341 հոգի իբր միջին կուտան 1 մ. 67, իսկ միայն 297 էրիկ մարդ 1 մ. 68: Ամէնէն կարճ Հայերը Միկրիցիներն են (1 մ. 53), իսկ ամէնէն երկայնները Ազալիսցիք (1 մ. 76), Գարա Քիլիսէցիք (1 մ. 79):

Դ. Գլուխ, իր տրամագիծն երբ, ի բ ձեւափոխութիւնները (déformation). — Հայերուն գլուխը կտր է (կարճագոնի) եւ ոչ թէ երկայն ինչպէս կը կարծուի առ հասարակ: Միջին զլիսաչափական նշանակն է (indice cephalométrique) 85: 40: Կիներու քով

(\*\*) Նրբաքիթ կը կոչուին այն զթիները որոնք բարձրութիւնը լայնութենէն շատ վեր է. ուրեմն զթի մը որ քան բարձրութիւն ունենայ այնքան փոքր նշանակ կ'ունենայ, ու որքան սափակ ըլլայ՝ այնքան մեծ նշանակ: Սեւամորթ խափշիկները, կապիկները ամէնէն խոշոր զթի նշանակը ունին:

սակայն այս նշանակը կ'իջնէ. անոնք նուազ կարճապահ են: Տիդի և Հաճընի մէջ կը տեսնենք միջնագանկեր, իսկ կիրուտի, Սիս ամէնէն աւելի կարճագանկները կը տեսնուին:

Դիտելու կարելի է մըն է սակայն նորածիններու զլիտուն ձեռքով տրուած փոփոխութիւնները: Ամէնուն յայտնի է որ երբ մանուկը ծնի զայտակիրն առաջին գործը կ'ըլլայ անոր պատիկ գրութիւնը կը տրոջնել, ցցուած տեղերը կը դուրսէ, տափակցած տեղերը կը բարձրէ ու երբ ոտանայ դնդակի մտեցող բան մը զոհ կը մնայ: Այդ գործողութիւնները, որոնք վատնուար ըլլալէ ալ գերծ չին, զըլխաւոր պատճառ մըն են Հայերուն արդէն բնական եղած կարճագանկութիւնը աւելցնելու: Երկրորդ կարելի է պատճառ մըն է սրբանի սովորութիւնը. նորածինը ժամերով հորիզոնական դիրքի մէջ կանակին վրայ ամուր ամուր կապուած կը մնայ, ծոծրակային մասը որ բարձին կոթընած է շուտով կը սկսի տափակնալ և այդ բնականէն ցցուած մասը կա'մ վեր կ'ելլայ զագաթին վրայ կա'մ կը աւարածուի երկու կողմնական ոսկորներուն վրայ: Այս վերջին պարագային ձեւափոխութեան արդիւնքը կ'ըլլայ յայտնի կարճագանկութիւն մը, իսկ առաջին պարագային տեղի կ'ունենայ բարձրագանկութիւն մը որ կը տեսնուի շատ մը արեւելեան ժողովուրդներու մէջ:

Գ

ԿԱՆԿԱԶԱՌՈՒԹԻՒՆ

Մարդաչափական հաւաքածոներու մէջ շատ քիչ Հայու գանկ կը գտնուի, այնպէս որ այս մասին վրայ տակաւին պէտք եղած զննութիւնները չեն կատարուած և տրուած չափերը բոլորովին ընդհանուր չեն կրնար նկատուիլ:

Մինչև վերջին տարիներու հնագէտները Պլուսթրախի նկարագրած գանկը միայն կը ճանչնային, որուն ուսկից եկած ըլլալն ալ շատ որոշ չէ: Վերջը ճանչցուեցաւ Մշոյ գանկը որ Բարիդի միզէն կը գտնուի: Քանի մը տարիէ ի վեր Մոսկուայի համալսարանը եօթը հայ գանկի տէր եղաւ, որուն երեքը Պուլկարիայէն և չորսը Անգրիսիայէն են: 1890ին Պ. Շանդր Անգրիսիայէն կը բերուէր Լիտնի Միզէն բերել նոր հինգ գանկ: Ամէնէն հարուստը սակայն Վիեննայի Միզէն է, որ Պուլսեցի բժիշկ մը կը բերած է 63 գանկ զրկել: Ուրեմն ամբողջ 74 Հայու գանկ կայ եւրոպական միզէններուն մէջ, որոնց 14ը միայն նկարագրուած և չափուած են: Չափի առարկայ եղած գանկերն ալ արդէն լաւ վիճակ մը չունին, կոտրած, փտտած ու խանգարուած են, ոչ մէկը ունի իր ստորին կզակը, բոլորն ալ արու սեռի կը պատկանին:

Ասոնց մէջ Մշոյ գանկը, որ ամէնէն խոշորն է, 1690 խորանարդ սանթիմետր պարունակութիւն ունի:

Երբ այդ գանկերը վրայի երեսէն դիտելու ըլլանք կը տեսնենք որ կը բացւի հակառակ մը կը ներկայացնեն և այս ձեւը մասնաւոր ընտանիքի մը յատկանիշը կուտայ այդ գանկերուն: Ճակատային ցցուածները բաւական յայտնի են և կողմնական ցցուածները ընդհանրապէս սովորականէն աւելի խոշոր:

Հորիզոնական շրջագծին միջինն է 309-520 մ.մ., Երեւանի շիրս գանկեր 533ն ալ կ'անցնին:

Լայնքէն անցած շրջագծը 450-456 մ.մ. է, Մշոյ գանկին վրայ այդ գիծը կը հասնի 490ի:

Հորիզոնական գանկաչափական նշանակն է 86. 90:

Երեսէն նայելով կը տեսնենք որ այդ գանկերուն վրայ ճակատը միջին կերպով բարձր է և բաւական լայն. երեսը աւելի լայն է քան երկայն, ինչ որ մտուալ զլիտն վրայ աւելի շեշտուած է, մանաւանդ կանոնց քով իրենց գունչին տափակ և այտերուն ցցուած ըլլալուն պատճառաւ:

Գանկերուն վրայ ակնակապիճներու և բթի ծակերու մասին միօրինակ յատկանիշներ կը պակսին ընդհանրապէս: Կարելի է ըսել սակայն թէ բթի ծակերը աւելի երկայն են քան թէ լայն, ինչ որ կը հաստատէ Հայերուն նրբաբիթ ըլլալը: Կար ակնակապիճները աւելի շատ են քան երկայնները:

Ետեւէն դիտելով հայ գանկերը կը տեսնենք որ բարձր կամար մը կը ձեւացնեն զագաթին վրայ, ինչ որ միշտ բնական ձեւ մը չէ այլ ձեւափոխութեան մը արդիւնքը:

ԱՆՏԵՊՈՒՄԱՆ

ՀԱՍՏԵՒ ՈՒ ԲԱԺՆԵԿԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել ա՞

L. FRANK,  
309, LABROKE GROVE,  
(ENGLAND). LONDON, W.



ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 1 ձին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԶԱՏԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ՄԸ

1700 ԻՆ

Չուիցերական կարեւոր հանգիսին, «Պիպլիթէք Իւնիվերսէլ»-ի մայիսի թիւին մէջ Պ. Մոսիս Միւռէ վերջերս հրատարակուած վաւերագրերու օգնութեամբ կը պատմէ սասնընթերցող դարուն վերջերը եւ տասնութներորդին «կիզքները Խորայէ Օրբի կատարած ձեռնարկները Եւրոպայի մէջ, Հայաստանը ազատելու համար պարսկական լուծէն, որուն տակ կը գտնուէր ան ասոն Կոլիասի մեծագոյն մասն ալ:

Խորայէ Օրբի մասին, մանաւանդ Եւրոպա կատարած դիմումներուն մասին շատ քիչ բան գիտէինք մինչեւ հիմա: Բաֆֆիի «Խամսայի Մէլիքութիւն»ներուն մէջ եղած յիշատակութիւնը շատ համառօտ ու թերի է: Միւնիխի դիւանատան մէջ է որ կը գտնուէին Խորայէ Օրբի կատարած ձեռնարկներուն վերաբերեալ բոլոր թղթերը, բայց շատը անյայտացած են այսօր: Պ. Հիլլը, դիտուն բրոֆէսորը որուն կը պարտինք այդ թղթերուն հրատարակութիւնը, դտած է միայն Խորայէ Օրբի մէկ քան նամակները՝ Տուսէլտորֆէն եւ Միւնիխէն թուագրուածի մէկ քանի նամակ՝ Բալզալիսայի իշխանէն եւ երկու ինք, նազիր նամակ Մեծն Պետրոս ձարէն որ պիտի մասնակցէր ծրագրուած «Հայկական խաչակրութեան»: Պ. Հիլլը, նոր դիւաներ ընելու յոյսով, պրպտած է նոյնպէս Պատէնի եւ Վատիկանի դիւանատները, բայց բան մը չէ գտած: Ասոր հակառակ, Վիեննայի պետական դիւանատան մէջ կատարած խուզարկութիւնները բոլորովին անպտուղ մնացած չեն: Այս գտնազան վաւերագրերուն շը նորհիւ, այսօր կարելի է Խորայէ Օրբի պատուիրակութեան ընդհանուր գծերը վերակազմել:

Խօսքը կը թողնուի Պ. Միւռէի:

Հայ իշխաններն էին որ նախաձեռնարկ եղած էին յեղափոխական շարժման խորուն գետպանը եղաւ Օրբի եւրոպական արքունիքներուն մօտ: 1678ին հաւաքուած էին՝ անհաւատներուն լուծը միանգամ ընդ միշտ թօթափելու միջոցներուն վրայ խորհրդակցելու համար: Օրբի կը մասնակցէր այդ մոզովին, որուն ներկայ էին նաեւ մէկ քանի բարձրաստիճան եկեղեցականներ: Օրբի, որ իբր վաճառական Եւրոպա եկաւ, ինչ տիազոտով կը մասնակցէր այդ մոզովին: Ինք անձամբ բացատրած է ասիկա: Օրբի կը յայտարարէր թէ իշխանական ընտանիքէ սերած է ինքը: Պոզ ընտանիքին — երկրին առաջին ընտանիքներէն մէկուն — կը պատկանէր ինքն է՝ որ կը հաւատաւ ասիկա: Իր պապերէն երկուքը լուսադոյն համարեր են մարտիրոսանալ քան քրիստոնէութիւնը ուրանալ: Իր հայրը իսկ, Մէլիք Խորայէ, թունաւորուեր է պարսիկ ծէսերուն համաձայն կրակը պաշտել մերժելուն համար: Օրբի իշ-

խանական ծագումը մեզի շատ տարակուսական կը թուի: Կարծենք թէ ասիկա զուտ առասպել մըն է, զոր հեղինակը հնարած է՝ եւրոպական արքունիքներուն մէջ դիւրաւ մուտք ունենալու համար: Հայաստանի երեւելի ընտանիքները արդէն միշտ մասնաւոր հակում մը ունեցած են նշանաւոր ծագումներու մասին, որոնք սակայն դժուարաւ կ'ապացուցուին: Մին կը յայտարարէ որ Սենեքերիմէն կը սերի, ուրիշ մը Չինաստանի վեհապետներէն, ուրիշ մըն ալ Յակոբ նահապետէն, — ճիշդագրութիւններ զորոնք ճշգրտելը շատ դիւրին չէ...

Խորայէ Օրբի ուրեմն Եւրոպա զրիւնեցաւ, այդ աշխարհին վեհապետները սիրաշահելու համար ինպատակահան հարցին: Ու իր աչքերը բնականաբար ամէնէն առաջ գործուց դէպի ժամանակին ամէնէն մեծ թագաւորը, Լուի ԺԴ, որուն փառքը ամբողջ աշխարհքը կը ընցնէր: Օրբի արքունիքին մօտիկը հաստատուեցաւ, Բարիզ կամ Վերսայլ, եւ սկսաւ ամէն տեսակ պերճանքի առարկաներու առոււտուր ընել: Այս կերպով յարաբերութեան մտաւ մեծ թագաւորը շրջապատող պալատականներու եւ պաշտօնակալներու հետ: Յոյսը անօնց վրայ գրած էր՝ իրեն ունիւրութիւն մը ձեռք բերելու համար. բայց իր բոլոր փորձերը ի պերեւելան: Մէկ քանի տարի ամբողջ յամառեցաւ, միշտ ճամբու գրուելով, առանց բնաւ վհատելու: Վերջ ի վերջոյ սակայն յոգնեցաւ եւ Ֆրանսայէն մեկնեցաւ, սաքերուն փոշին թօթուելով անոր հողին վրայ: Ժամանակին պատմագիրներուն մէջ ի զուր լուսաբանութիւններ փնտռեցինք՝ Ֆրանսայի մէջ Օրբի պատուիրակութեան մասին: Չենք գիտեր թէ Արեւ-թագաւորը — կամ գոնէ իր նախարարները — ինչո՞ւ արհամարհեցին Հայաստանի իշխաններուն գետպանը: Կը կասկածելին թէ խաբեբայ մըն է ան: Իր ծրագիրը աճյալի ցնորական կը գտնուէին որ նկատառութեան առնել իսկ չէր արժեր: Հաւանական է առ: Մնաց որ, Լուի ԺԴ ուրիշ խորհուրդներ ունէր մտքին մէջ: Ասկից գատ, Հայերը իրեն համակրելի չէին: Բոլոր ուժովը կը պախարակէր կաթալիկ եկեղեցիէն բաժնուած մնալու յամառութիւնին: Ասկից առաջ արդէն, Կ. Պոլսի ֆրանսական գետպանը, տը Նուանսէլ մարքիզը, ի զուր Հայերուն գատը պաշտպանութեմ էր քանիցս. «Արեւելքի քրիստոնէականները, կը զրէր այդ դիւանագէտը իր մեծահոգակ տիրոջ, ամէն կողմէ ձեր պաշտպանութեանը կը դիմեն՝ որպէս անքոյթ ապաւենի մը, եւ կարելի է ըսել թէ ձեր վեհափառութիւնը կեզրոնն է որ կերպով մը կը միանան պետին ուսկից բաժնուած են:» (\*) Ազնիւ խօսքեր, որոնք արձագանգ չգտան: Լուի ԺԴ կը բարեհաճեր ի հարկին Հայերը պաշտպանել Արեւելքի մէջ

(\*) Այս հետաքրքրական հատուածը քաղուած է Նուանդէլի կողմէ Լուի ԺԴի զրիւնած անտիպ նամակ մը՝ արեւելեան եկեղեցիներուն գտնազան վարդապետութեանց մասին: Նամակը մաս կը կազմէ Բարիզի Ազգային Մատենադարանին մէջ պահուած հայկական ձեռագիրներու հաւաքածոյին յաւելուածին, եւ թիւն է 67:

ընդդէմ իրենց հարստահարիչներուն, բայց անոնց թոյլ  
չէր տար բնակիչ իր երկիրներուն մէջ. խուճը մը Հայեր  
որոնք Ֆրանսա հաստատուած էին եւ հոն ապարաններ  
հիմնած, հրաման ստացան երկրէն ելլելու: Անոնք ալ մա-  
մուրով ու գոյքով Հոլանտա անցան: Օրի աւելի բազումս  
եղաւ: Չարտաքուսեցաւ: Որչափ ատեն որ Ֆրանսա մնաց՝  
իր գոյութիւնը անգիտանալով շատացան:

Օրի, իր ջանքերուն ապարդիւնութեանը քաջ համոզ-  
ուած, իր աչքերը դարձուց դէպի Քալազինայի իշխանը:  
Հայաստանի թագը իր Հոնոսի եղբրներուն երկրին ա-  
ւելցնելու հեռանկարը թերեւս հրապուրէր այդ նուազ խո-  
շոր իշխանը: Այս հաշիւը ճիշդ էլաւ:

Օրի Քալազինայի մէջ նոյն ռազմագիտութեան հետե-  
ւեցաւ ինչպէս Ֆրանսա: Տուսկտորֆի հաստատուեցաւ  
իրը մեծաբանակ արմատիքի եւ դինիի վաճառական: Ժ.ս.  
մանակ մը ետքը, ու եւ է պատրուակով ինդրադիր մը ուղ-  
ղեց պալատականներուն եւ, աստիճանէ աստիճան, իշ-  
խանին ներկայութեանը ընդունուեցաւ: Ժան-Կլիյեով իշ-  
խանը, Վիլզէլսպախեան տունէն, այն ատեն իբր քառա-  
տուն անբեկան մարդ մըն էր, քաջառուջ ու կորովի, շատ  
փառասեր եւ շատ պերճասեր: Իսրայէլ Օրիի առաջին խօս-  
քերէն, հմայուեցաւ: Հնարամիտ Հայը հոգ տարաւ զինքը  
այդ լաւ տրամադրութեան մէջ պահելու: Ճարտարօրէն կը  
շարժուէր ժան-Կլիյեովը, անոր աչքին կը շողացնէր  
արքայական թագ մը, հաւաստելով թէ ծրագրեալ խա-  
չակրութիւնը « Քալազինեան տան փառքը Եւրոպայի բո-  
լոր գերպատաններէն վեր պիտի բարձրացնէր: » Օրի, ա-  
ւելորդ է ըսել, պատմեց՝ ի մեծ ամօթ Լուի Ժի ի՛ այդ  
վեհապետին ցոյց տուած մեղսապարտ անտարբերութիւնը,  
« Աստուծոյ մասը զտայ այլտեղ, ըսաւ: Ասոր վրայ Ֆը-  
րանսայէն մեկնեցայ եւ եկայ Քալազինա հաստատուեցայ:  
Չղջարու պատճառ չունիմ՝ ասոր համար. ընդհակառակը:  
Ուստի համոզուած եմ որ Աստուած՝ զրկեց իս հոս: Այս-  
պիտի դէպք մը պատահած էր Քրիստափոր Գոլումպոսի:  
Այդ մեծանուն նաւորիսն ալ ութ տարի անցուց Ֆրան-  
սայի արքունիքը, ինդրելով որ նաւ մը նուիրեն իրեն ու-  
րով պիտի երթար տիրէր նոր աշխարհի մը, ոսկիի եւ ար-  
ծաթի հանքերով հարուստ: Մտիկ չըրին զինքը: Գոլում-  
պոս, վհատած, Սպանիա անցաւ, ուր փութացին իր  
ինչպիսիքը կատարել: Չեր բարձրութեան ծանօթ են բոլոր  
բարիքները որ Սպանիա քաղեց այս վեհանձնութենէն:  
Կը յուսամ որ նմանօրինակ փառք մը օր մը բաժինը պի-  
տի ըլլայ Քալազինեան տան, եթէ ձեր բարձրութիւնը հա-  
ճի խորհուրդներու անսալ: »

Օրի մտայ զոյներով նկարագրեց իր հայրենակիցնե-  
րուն կրած տառապանքները իրենց կրօնքին պատճառաւ:  
Բայց հաւատեց որ Հայերը, ազատելուն պէս, սիրա-  
յօծար պիտի ընդունէին կաթոլիկութիւնը: Այս խոստումը  
մեծ կշիռ մը ունեցած ըլլալու է ժան-Կլիյեովի մաքին մէջ:  
Ինքը արգարեւ թունդ կաթոլիկ էր: Իր այս նախան-  
ձակնորութիւնը մինչեւ իսկ զինքը շատ առաջ աւարած էր  
երբեմն: Քանի քանի անգամ, բողոքական եկեղեցիներ

քմահաճօրէն՝ կաթոլիկներու յանձնած էր եւ կողոպտած  
էր իր երկրին բողոքական հասարակութիւնները, այնպէս  
որ բողոքականները խմբովին գաղթած էին իր իշխանու-  
թեան օրով:

Օրի իրօք կը հաւատար թէ Հայերուն կրօնափոխու-  
թիւնը այնքան դիւրին գործ մը պիտի ըլլար: Իրօք այդ-  
պիտի պատրանքներ ունէր: Ասիկա շատ հաւանական չէ,  
եւ ասիկա նոյն իսկ ամէնէն ծանր պատճառներէն մին է  
տարակույսի ենթարկելու Ժան-Կլիյեովի խորհրդականին  
անկեղծութիւնը եւ անշահախնդրութիւնը: Չէ՛, Հայաստան  
ընաւ արամապիր չէր հոսմէական եկեղեցիին գիրկը մտնե-  
լու: Ասոր համոզուելու համար կը բաւէ կարգալ Ծարտէն  
ասպեալը որ Հայաստան եւ Պարսկաստան ճամբորդեց  
ճիշդ այն միջոցին ուր Օրի կ'աշխատէր Եւրոպան շահա-  
գրողել իր հայրենակիցներու վիճակովը: Ծարտէն ընդհա-  
կառախը մեզի ցոյց կուտայ հաստատապէս, յամառապէս  
հերձուածոյ Հայաստան մը, եւ բնաւ պատճառ չունինք  
իր վկայութեանը կասկածելու:

« Հայերը, կը գրէ, միշտ յարած մնացած են իրենց  
հին հաւատքին: Հիանալի, կամ, եթէ կ'ուզէք, հրաշալի  
բան մըն է որ, թէպէտ տասնըմէկ գարէ ի վեր խլամ ախ-  
րապետութեան տակ կը գտնուէին, թէպէտ աղքատ են ու  
տղէ՛մ ինչպէս կ'երեւակայէք որ ըլլալու են այդպիսի սարը-  
կութեան մը ենթարկուած մարդիկ, այսու հանդերձ  
իրենց հին հաւատքը անխախտելի է: Չայն կը պահպա-  
նեն առոնց ուրիշ հաւատք ընդունելու, թէ՛ ընդդէմ իրենց  
գերիշխան աւր մահմետականներուն խոշտանգումներուն,  
եւ թէ՛ ընդդէմ հոռմէական եկեղեցիին միսիոնարութեանց  
որ, երկու գարէ աւելի է, իր միսիոնարներով, քահանա-  
ներով ու վանականներով կ'աշխատի իր փարախը առնել  
զիրենց: Կարելի չէ պատմել Հոռմի աթոռին թափած ջան-  
քերը եւ դրամը այդ նպատակին համար, բայց ի զուր, ու-  
րովհետեւ անոնք որ Եւրոպայի մէջ կաթոլիկ կրօնքը  
կ'ընդունին, տեղերին գառնալնուն պէս ամէն ժամանա-  
կէ աւելի Հայ կ'ըլլան եւ նորէն կը սկսին նորովի Լուսն  
պապը, որուն համար կ'ըսեն թէ խղեց Արեւելքի եւ Արեւ-  
մուտքի եկեղեցիներուն միջեւ եղած միութիւնը, եւ անոր  
բոլոր յաջորդները, եւ ատել հոռմէական եկեղեցիին բո-  
լոր զաւանանքները որոնք իրենցներուն հակառակ են: »

Հայերուն անձուկ ձեւապաշտութիւնը, իրենց կրօն-  
քին պատուիրած պահքերը պահելու խստութիւնը, շատ  
ահաճելի յիշատակներ թողուցած են Ծարտէնի: Գտնու-  
թեամբ կը յիշէ թէ « օր մը ինչ որ ըրաւ չիրցաւ հաւ մը  
ձեռք բերել իր հիւրընկալներէն՝ արդանակ մը շինելու  
համար », որովհետեւ մեծ-պահք էր, եւ հարկ եղաւ որ  
« դաւազանը վերցնէ, որպէս զի իրեն հակիթ տան: »  
Այս ամէնը Իսրայէլ Օրիի տուած հաւաստիքներուն գէ՛մ  
կ'իլլէ: Հայաստանը՝ ի փոխարէն ինքնօրինութեան՝ կա-  
թոլիկութիւնը ընդունելու պատրաստ յայտարարելու հա-  
մար, Տուսկտորֆի արմատիքի վաճառականը պէտք էր որ  
կա՛մ շատ անկեղծ չըլլար կա՛մ շատ կոյր ըլլար: Մար-  
զըս յուսացածին կը հաւտայ յօժարակամ: Ուստի կարե-

լի է որ Օրի ուղղամիտ եղած ըլլար այդպիսի լեզու մը գործածելով, եւ ան ատեն իր կորովամտութիւնը միայն մեղադրանքի առարկայ ընելու է:

Ժան-Կլիյեմ — Եւ ա՛տ էր էականը հայ առաքելալին աչքին — հաւատաց այդ խօսքերուն եւ ուշի ուշով մտիկ ըրաւ իր խօսակցին, լուսաբանութիւններ խնդրեց, Հայաստանն ասանոց ճամբաներուն մասին տեղեկութիւն հարցուց: Օրի, որուն ուղածն ալ սիրաւ բանալ էր, ազատ ասպարէզ տուաւ իր արեւելցի լեզուանութեանը: Ճամբան նկարագրեց, Վիեննայէն Գրաքովիա, Մոսկուա, Տէմիրգաբու: Գովարանեց տեսարաններուն սքանչելիքը, կլիմային պատուականութիւնը, բնակիչներուն գեղեցկութիւնը եւ քաջաոգչութիւնը: Հարիւրամենիները բազմաթիւ էին Հայաստան, եւ բնիչները շատ սակաւաթիւ:

Այդ արեւելցիին քիչ մը «հարաւային» շեշտը Պ. Հիկլըի կասկած կուտայ. «Այդ չափազանցութիւնները, կը հարցնէ, մեզի կասկածելի ընծայելու չե՞ն Օրին»: Այս առարկութիւնը, շիտակը, հիմնաւոր չէ: Խորայէլ Օրի, ապիկա բացայայտ է, զիմիչ պատկեր մը կը դժը Հայաստանի՝ Ժան-Կլիյեմը մղելու համար որ իր խաշակութեան խորհուրդը ի գործ գնէ: Իշխանին աչքին, պէտք էր որ այդ աշխարհակալութիւնը՝ յոգնութիւնը արևը: Կըրնանք հաւատալ նաեւ որ Խորայէլ Օրի հայրենասիրութիւնէ մզուած է որ կը չափազանցէր: Հայրենամարտութիւնը սուղի ծաղիկ մըն է որ դիրազդ եւ հալածուած ազգերուն հողին վրայ կ'ուսմանայ: Ինչո՞ւ հայ գեապանը անկեղծ եղած պիտի չըլլար՝ Աւետեաց երկրի մը պէս նկարագրելով իր սիրելի հայրենիքը:

Հրապուրուած, յափշտակուած այս ճառերէն, Ժան-Կլիյեմ յայտարարեց Տուսկոտրֆի իշխան-վաճառականին թէ բարձր սրտովը կը համակրի հայ ազգին եւ խոստացաւ ազատարար շարժման զլուխը անցնել: Նախ եւ առաջ, Օրի Բալազինայի իշխանին կողմ պատուիրակ զրկուեցաւ իր հայրենակիցներուն յօտ՝ զործին նախնական հիմքը գնելու եւ յատակադիծը պատրաստելու: Օրի հետը մէկտեղ կը տանէր Ժան-Կլիյեմին նամակներ Վրաստանի իշխանին, երկու պատրիարքներու եւ զանազան հայ երեւելիներու ուղղուած: Տարակոյս չիկար որ ամենուրեք լաւ ընդունելութիւն պիտի ընէին իրեն: Բայց, Օրիի ակնկալութեան հակառակ, իր ձեռնարկը իր բարձր հայրենակիցներուն հաւասարապէս բարեկարմար չթուեցաւ: Պատրիարքներէն մին, որուն պիտի յանձնէր Ժան-Կլիյեմին նամակ մը, քիչ առաջ վախճանած էր, երբոր Օրի ստորը հայկական հողը գրաւ: Անոր յաջորդը ծայրագոյն ցրտութեամբ ընդունեց Բալազինայի իշխանին պատուիրակը: Օտար իշխան մը կանչել. Ինչո՞ւ: Միթէ ամէն բան լաւ չէր Հայաստաններուն լաւագոյնին մէջ: Օրի խոհեմութիւն համարեց ալ աւելի շրջադիւր այդ պատուիրակ եղբոր եւ քենասար ուղեւորեցաւ, որ կը կենար իր հայրենասիրութեամբը ծանօթ պատրիարք մը: Քենասարի պատրիարքը նախ զրկաբաց ընդունեց Խորայէլ Օրին: Փութով հրաւիրեց հինգ բարձրաստիճան եկեղեցական եւ տասը իշխան:

Ու ժողով կազմեցին: Օրի իմացուց թէ երսուպցի մեծատուն իշխան մը իրեն պաշտօն տուած էր ազատադրութիւն խոստանալ իր հայրենակիցներուն: Բալազինայի իշխանը, կ'ըսէր, խորապէս կը կարեկցէր հայ ազգին տառապանքներուն եւ կը հրճուէր իմանալով քրիստոնեայ հաւատքին մէջ ամբապինդ մնալին, հալածիչներուն դէմ առ դէմ: Ժան-Կլիյեմին ընդհուպ մեծազուժար գրամ պիտի ստանային՝ երկրին եկեղեցիներուն եւ վանքերուն պահպանմանը համար: Այդ գրամական առաքումներէն յետոյ զօրք պիտի զրկուէր: Երսուպական բանակ մը պիտի շուշանար գալու Հայաստանը ազատելու:

Խանդավառ ազազակներ ողջունեցին այս խօսքերը: Ամենքն ալ, կրօնական եւ իշխան, ցնծութեան ցոյցերով ընդունեցին Բալազինայի իշխանը՝ իբր ժամանակակից ամէնէն մեծ վեհապետը: Բայց բանախօսութեան շարունակութիւնը նուազ հաճելի եղաւ: Իշխանը, շարունակեց Օրի, մէկ պայման միայն կը գնէր իր միջամտութեանը, — Հայ եկեղեցիին հաշտութիւնը Հոսմի հետ. «Իրօք ալ ինչո՞ւ չի պիտի ճանչնանք պապին իշխանութիւնը, հարցուց Օրի՝ խօսքը կղերականներուն ուղղելով: Մտոցած ենք որ սուրբ Գրիգոր, մեր եկեղեցիին զլուսար լայսը, իր վաւերացումը խնդրեց Հոսմի եպիսկոպոսէն:» Այս խօսքերը աննկարագրելի տակնուվրայութիւն մը առաջ բերին: Կղերականները, իրենց զայրացիտ բողոքներով, թող չաւելին Օրիի որ շարունակէ. «Չէ՛, բնա՛ւ, բնա՛ւ, իրենք այժ պիտի չի տային ազատադրութեան փորձի մը սրուն գինը՝ հաւատարայութիւնը պիտի ըլլար:» Ու ժողովէն մեկնեցան, հաստատապէս որոշած օտար մնալ սարքուող պահին: Կղերին այս ընդվզումը պէտք էր ջնջեր Օրիի պատրանքները՝ իր հայրենիքին մէջ երսուպական միջամտութեան մը յաջող ելքին մասին: Ուսնց հողերուական տարրին մասնակցութեանը, իր երկրին մէջ ու եւ է գործառնութիւն՝ անյաջողութեան պատասպարտուած էր առաջուց: Բայց Խորայէլ Օրի այնչափ առաջ գացած էր որ չէր կրնար ետ դառնալ, եւ իր պատրանքները յամառ էին: Գործը մինչեւ ծայրը տարաւ: Իշխաններուն հետ մինակ մնալուն, անոնց հազորդեց Ժան-Կլիյեմի նամակները եւ խնդրեց որ պատասխանեն գրութեամբ մը զոր ինք իշխանին պիտի յանձնէր՝ Երսուպ գործին: Ուղերձը անմիջապէս խմբադրուեցաւ: Հայ իշխանները զգացած ուրախութիւններն կը յայտնէին Օրիի բերած աւետիսէն, «ուրախութիւն նման անոր որ յառաջ բերաւ Աստուծոյ պատգամը, հրեշտակի մը միջոցաւ ծանուցանելով Արամի թէ Մեհիան պիտի զրկէր աշխարհ՝ փրկելու համար մարգիկը:» Իշխանները կը յայտնէին թէ բարձրովին պատրաստ էին ընդունելու հոսմեական եկեղեցին: Միայն թէ Ժան-Կլիյեմ փութար՝ «Օրհնեալ է Աստուած, կը գրէին, բան մը պակաս չէ առաջադրեալ արշաւանքին յաջողութեանը համար, ո՛չ խանդ, ո՛չ դրամ, ո՛չ մարդուած մարդիկ: Պէտ մը միայն կը պակսէր մեզի:» Եւ այդ պետը գտած էին ահա՛ Հայաստանի ազատութեան ժամը պիտի հնչէ՛ր վերջապէս:

Սիրտը այս սիրելի պատրանքներով պատարուն, իս-  
րայէլ Օրի Երուզա գարձաւ: Ու 1699 սեպտեմբեր 13ին  
Բալադինայի իշխանին կը յանձնէր իր հայրենակիցներուն  
նամակը: Յետոյ, գործելու հետեւեալ յատակադիծը ու-  
րոշուեցաւ: Ժան-Կիլիեոմ միայնակ չի՛ պիտի երթար  
պատերազմելու: Շարժման նախաձեռնութիւնը պի-  
տի ստանձնէր եւ գլխաւոր զսհողութիւնները պիտի ը-  
նէր, քանի որ Հայաստանի թաղը իրեն պիտի իյնար,  
բայց զաշնակից կը փնտռէր: Կարելի չէր իրեն կողմնա-  
կից սնննալ գերման կայսրը, ձարը, պապը եւ Թուրքա-  
նայի մեծ-գուբըր որ ազգական էր Ժան-Կիլիեոմի: Պէտք  
էր ասոր աշխատիլ: Յետոյ Բոլոնիոյ թագաւորէն եւ ռուս  
կայսրէն զիբաւ արտօնութիւն պիտի ձեռք բերուէր իրենց  
երկիրներէն անցնելու: Չէ՛ մի որ սրբազան պատերազմի  
մը վրայ էր խնդիրը: Չէ՛ մի որ բեռնարար զանգեղուն  
մէջ հետեւնին պիտի տանէին խաչով եւ սուրբ Գրիգորի  
շողշողուն պատկերով զարդարուած հարիւր զրօշակ, հայ-  
կական նահանգներուն բաշխելու համար: Բալադինայի  
իշխանը կը յուսար իբր 10,000 զինուոր ունենալ հետը,  
իր զաշնակիցներուն զօրքերն ալ հաշուելով: Այդ բանա-  
կը 1700 մայիս ամսուն ճամբայ պիտի ելլէր: Պիտի  
անցնէր Պոհեմիայէն, Բոլոնիայէն, Ռուսաստանէն՝ Մոս-  
կուայի ճամբով: Յետոյ Վրլիան ի վար պիտի իջնէր նա-  
ւերով: Եթէ ամէն բան լաւ ընթանար — ու ինչ կնճոռ-  
տութիւններէ կարելի էր վախնալ — այդ 1700 տարւոյն  
հոկտեմբերին պարսկական սահմանազրուիւր պիտի անցնէր:  
Շամախի, Պաքուի նահանգին մէջ, առնուելիք առաջին բեր-  
դը պիտի ըլլար: Դիւրին գործ մը պիտի ըլլար ատիկա, կ'ը-  
սէր Օրի: Քրիստոնեայ բանակին թնդանութիւններուն հեռուէն  
շողալը տեսնելուն պէս, ասոր հազար զինեալ Հայ Շա-  
մախիէն պիտի ելլէին եւ պիտի գային պաշարողներուն միա-  
նալու: Իսրայէլ Օրի իշխանին կը խոստանար իբր 200,000  
Հայու օժանդակ խուժը մը, պատերազմին մէջ իրեն աջակ-  
ցելու համար: Այս թիւը անշուշտ շատ չափազանցուած  
է, ինչպէս նաեւ այն 80,000 քրիստոնեայ մարտիկները  
գործնք Վրաստան պիտի հայթայթէր, Օրիի լաւատես եւ  
բեզմնաւոր երեւակայութեանը մէջ: Խաչակիրներուն բա-  
նակը, չորս թեւի բաժնուած, յետոյ յառաջ պիտի խա-  
ղար երկրին տիրելու: Ու այս ընդհանուր ապստամբու-  
թեան դէմ՝ որուն ուժ պիտի տային քաջամարդ զօրքեր,  
ինչ պիտի կրնային ընել պարսիկ վեհապետին խաւա-  
քարտէ զինուորները: Շահը ընդ ամէնը 100,000 ձիա-  
ւոր պահակազօրք ունէր: Հետեւակազօրք բնաւ չունէր:  
Իր պարտութիւնը ապահով էր: Ժան-Կիլիեոմ իշխանը  
Իսրայէլ Օրիի գիտել տուաւ թէ խաչակիրներուն բանակը  
փոխադրելը եւ սնուցանելը շատ սուղի պիտի նստէր. « Հա-  
յաստանի մէջ խակ, պատասխանեց իր փորձիչը, շատ զե-  
րութեամբ 60 միլիոն ֆրանք պիտի գտնուէր, պատերազմին  
ծախքերը գոցելու համար: »

Ժան-Կիլիեոմ այս պատասխանէն շատ գոհ երեւ-  
ցաւ: Ու թողուց որ իր խօսակիցը շարունակէ.

Սպանիա եւ Բորզուկալ, Իսրայէլ Օրիի կարծիքով,

անշուշտ պիտի աջակցէին քրիստոնեայ բանակին: Ուստի  
այդ պետութիւնները մէկ քանի մարտանաւ պիտի զրկէին  
Պարսից ծոցը: Պէնսէր-Ապպասի շուտով անձնատուր  
պիտի ըլլար: Ինչպէս կը տեսնուի, Իսրայէլ Օրի երուզա-  
կան միահամուռ համաձայնութեան մը վրայ դրած էր  
յոյսը՝ իր հայրենիքը ազատելու համար. այսօրուան Հա-  
յերը նուազ միամիտ են:

— Է՛ եթէ քրիստոնէական արշաւանքին առթիւ Պարս-  
կաստան ու Թուրքիա միաբանին, առարկեց Ժան-Կիլիեոմ՝  
վստահալից Հայուն: Այդ նիզակակցութիւնը տհամելի  
անակնկալներ չ'ունենար մեզի համար:

— Երուզական վեհապետներու կանխագոյն վիտանա-  
գիտական ձեռնարկով մը այդ նիզակակցութեան առաջը  
կարելի է առնել, պատասխանեց Օրի: Մնաց որ, ենթա-  
գրեմք թէ կատարուի. Ռուսիա շատ ուրախ պիտի ըլլայ՝  
Թուրքիայ գործը իրեն ձգուելով:

Օրի ամէն բանի պատասխան ունէր շխտակը: Ժան-  
Կիլիեոմ, որուն ուզածն ալ համոզուիլ էր, այդ փաստե-  
րուն առջեւ տեղի տուաւ: Ու խաչակրութիւնը սկզբամբ  
որոշուեցաւ: Կը մնար միայն նիզակակցիցներ վստակիլ:  
Ժան-Կիլիեոմէն յանձնարարազրբը զրպանը դրած՝ Իսրա-  
յէլ Օրի նոր ճամբորդութիւն մը սկսաւ, այս անգամ Երու-  
զայի մէջ: Իր պտոյտը սկսաւ Իտալիայէն: Կղզիէս ԺԱ  
պապը ուրախութեամբ ընդունեց զինքը եւ իր աջակցութիւնը  
խոստացաւ: Քահանայապետը անշուշտ փորձուեցաւ Հա-  
յերը իրեն փարախին մէջ առնելու հեռապատկերէն: Իր  
միտինարները Անատոլուի մէջ մէկ քանի կրօնափոխու-  
թիւններ կատարած էին որոնք լաւ յոյսեր ներշնչած էին  
իրեն: Օրի օգուտ քաղեց այդ նպաստաւոր սրբամարտու-  
թենէն:

Չենք գիտեր թէ Թուրքանայի գուբըր եւ Բոլոնիայի  
թագաւորը ինչ ընդունելութիւն ըրին Ժան-Կիլիեոմի գոր-  
ծակատարին, բայց բաւական ստոյգ տեղեկութիւններ ու-  
նինք Մեծն Պետրոս ձարին մօտ կատարած ձեռնարկնե-  
րուն արդիւնքին մասին:

Ռուսիոյ վեհապետը շքեղ ընդունելութիւն մը ըրաւ  
Իսրայէլ Օրիի: Անձնապահ զօրքերու ջոկատ մը ամէն  
տեղ իրեն կը հետեւէր, եւ ոսկեզօծ կառքեր զրանը առ-  
ջեւ կեցած էին իր տրամադրութեանը տակ: Մեծն Պետ-  
րոս սիրալիւր կերպով մտիկ ըրաւ աշխարհակալութեան  
յատակազմին սքանչելի ցուցադրութեանը: Այդ զէպի  
Փոքր-Ասիա արշաւանքի ծրագիրները ձարին փառասուր  
գիտումներուն կը համապատասխանէին: Առանց աւելի  
ճշգրիտ հարցութիւնք մը ընելու յաղթանակէն յետոյ իրեն  
իյնալիք բաժնին մասին, խանդավառ հաւանութեան նա-  
մակ մը զրեց Բալանդինայի իշխանին: Ատիկա գերընտիր  
պատճառ մըն էր որ զէպի Հայաստան խաչակրութիւնը  
անյաջողութեամբ ու երկպառակութեամբ վերջանար: Պետ-  
րոս Ա չի պիտի յօժարէր գործին մէջ մտնել՝ Բալադի-  
նայի իշխանին ծառայութիւն մատուցանելու հաճոյքին  
համար միայն: Իր բաժինը պիտի պահանջէր, առիւծի բա-  
ժինը անշուշտ: Ժան-Կիլիեոմ, աշխարհակալութիւնը աւար-

տելէ յետոյ, հզօր հակառակորդ մը պիտի գտնէր յանձին այդ զինակցին: Վերջ ի վերջոյ որո՞նք պիտի պատկանէր այդ Հայաստանի թաղը զոր ֆենասար հաւաքուած իշխանները Բալայինայի իշխանին խոստացած էին: Գիւրին պիտի չըլլար կարգադրել այդ խնդիրը: Մօտէն քննելով ձեռնարկին յարուցած գծաւարութիւնները, յառաջ բերելիք ստիւթութիւնները, մէջտեղ գնելիք մրցութիւնները, սա եզրակացութեան կը հասնինք թէ Օրիի ծրարիւրը վերջ ի վերջոյ շատ նեղը պիտի ձգէր պզտիկ իշխանը, որ անոր կարեւորութիւն տալու չափ անխորհուրդ գտնուած էր:

Չարը, զոր իր ուժը կը պաշտպանէր ընդդէմ ամէն փտանդի եւ որ շատոնց որոշած էր երթալ պատերազմի Արևելք՝ Շուէտի թագաւորին դէմ՝ մղած պատերազմը աւարտելուն պէս, տէր կանգնեցաւ այս հայկական իսպախութեան ծրագրին եւ առաջ մղեց արշաւանքին պատրաստութիւնները: Այդ վայրկեանէն սկսեալ, մարտական գործունէութիւն մը տիրեց Վոլկայի նաւահանգիստներուն՝ Խազանի եւ Աստրախանի նաւարաններուն մէջ: Շատ շանցած 350 նաւ պատրաստ էին՝ փոքր-Արիոյ արշաւանքին յատկացուած մարզերուն, ուսեսաններուն եւ ռազմամթերքին փոխադրութեանը համար: Շարլ ԺԲ ի (Շուէտի թագաւորը) անձնատուութենէն անմիջապէս ետքը ճամբայ պիտի կլուէր: Ու այդ անձնատուութիւնը շատ չի պիտի ուշանար, կ'ըսէր ձարը: Խորայէ Օրի, ի վարձատրութիւն իր բարոյք ծառայութեանց, «նորին վեհափառութեան ձարին գնդապետ» ի աստիճան ստացաւ, որով փութաց ստորագրել իր նամակները: Այդ պաշտօնը լոկ պատուակալ չէր: «Գնդապետ» Օրի, յառաջիկայ պատերազմին մէջ, հեծեալ հրացանակիրներու գունդի մը պիտի հրամայէր: Շատ մեծ յոյս դրուած էր այդ զորմանական սնով հրահանգուած զօրքերուն վրայ, որոնք զինուած էին նոյն այն հրացաններով ինչ որ Ժան-Կիլիանի հետեակները:

Օրի ակամայ թողուց իր անձնապահ զօրքերը եւ կառքերը՝ վիեննա զեսպանութեան երթալու եւ Լէոբուլտ կայսրը իր ծրագրին կողմնակից վաստակելու համար: Բայց շատ գէշ ատենի հանդիպեցաւ: Կայսրը Ֆրանսայի հետ կռուի բռնուած էր, եւ այդ պատերազմը իր բոլոր ժամանակը ու զրամը կը գրաւէր: Բացէ ի բաց յայտարարեց որ հետաւոր արկածներու վրայ մտածելու ժամանակ չունէր: Օրի ձարին մօտ գործաւ: Հոն, նոր յուսախարութիւն մը կը սպասէր իրեն: Շարլ ԺԲ ռուս յաղթականին հարկադրած հաշտութեան պայմանները մերժած էր. պատերազմը կը շարունակէր: Հետեւաբար կարելի չէր որ ձարը լրջօրէն գրաւէր Հայաստանի արշաւանքովը: Վերջապէս, ի լրումն անյաջողութեան, Բալայինայի իշխանը, որ խաչակրութեան հողին էր, ինքն ալ ստքը ձեռքը կապուած գտաւ: Գերմանիոյ կայսրը զինքը իրեն հետ բռնեց պատերազմի տարաւ ընդդէմ Ֆրանսայի: Յետոյ Ժան-Կիլիան հարկադրուեցաւ մարանչիլ իր իսկ երկրին եւ իր իսկ տան իրաւունքներուն, որոնք Մոնզաներ-Պլանչի Կոթաղի ճակատամարտէն վտանգուած էին, անվթար մը-

նալուն համար. ու ասոնք անլուծելի դժուարութիւններ էին որոնք երկար ատենուան համար գերմանական հողին կապուած կը պահէին Բալայինայի իշխանը: Ժան-Կիլիան ըսել տուաւ Օրիի թէ խաչակրութենէն չէր հրաժարեր, բայց լատագոյն օրերու սպասելու էր:

Հայ առաքեալը ինչ մտածեց ոչս յաջորդական ձախտրութեանց վրայ: Անշուշտ, շատ յուսախար եղաւ: Բայց, իր հայրենակիցներուն յասկանիչը եղող յամառութեամբ, չվհասեցաւ: Չարը գործելու որոշում տուած էր, բացայայտ էր ասիկա: Օրի այդ վայրկեանէն ամէն ուղղակի յարաբերութիւն գաղտնեցուց Բալայինայի իշխանին հետ եւ իր գործունէութիւնը սահմանափակեց Մեծն Պետրոսի բարոյութիւնը: Հայաստան զրկուած ռուս լրտես մը գործած եկած էր՝ պարսկական հարստահարութեանց մասին անվերջ պատմութիւններով: Պետրոս կայսրը, միշտ Շուէտի պատերազմովը դրադած, որոշեց զոնէ խաղաղական յոյս մը ընել, սպասելով լատագոյնին: «Գնդապետ» Օրին իրր դեսպան զրկեց շահին մօտ, այսպանելու պարսիկ վեհապետը՝ Հայերը հարստահարելուն համար: Օրի նոյնպէս շահին կը տանէր յանդիմանական նամակներ՝ Ժան-Կիլիանին, Լէոբուլտ կայսրէն եւ պապէն ստորագրուած:

Բարսիացի ճիզուիթ հայր մը, Քրուզէնսքի անուն, իր «Յիշատակ» ներուն մէջ մէկ քանի տեղեկութիւն թողած է մեզի՝ Խորայէ Օրիի այս վերջին վիճակափոխութեան մասին: Չարին պատուիրակը Խապահան մտաւ՝ 200 Մոսկովի եւ Հայու հետեւորդ խմբով մը: Իր իշխանական կարծեցեալ ծագումը եւ իր գնդապետի աստիճանը խրոխտաբար կը յիշէր միշտ ամէն առթիւ: Առաջին տեսակցութենէն իսկ, շատ բարձրէն վարուեցաւ պարսիկ վեհապետին հետ: Անոր յայտնեց — կամ յիշեցուց — թէ հալածանքներէն փախուտական հազարաւոր Հայեր ամէն տարի Երօպա կ'ապաստանէին: Շահը չէր ըմբռնել թէ այդ անդուզ գաղթականութիւնը տկարացման անպարմանելի եւ արագ պատճառ մըն էր իր կայսրութեան համար: Եւրոպայի վեհապետները, աւելցուց Օրի, համոզուած էին թէ շահը կ'անդիլատար իր պաշտօնեաններուն զեղծումները, — ան ատենն ալ նուիրագործեալ բանաձեւն էր աս: Հիմակ որ ամէն բան գիտէր, պէտք էր փութար վերջ մը գնելու: Ու ձարին պատուիրակը արդարացի կերպով գիտել տուաւ արեւելեան վեհապետին թէ եւրոպացի վեհապետները բնաւ չէին բռնադատել իրենց երկիրներուն մէջ ընակող մահմետականները՝ քրիստոնէութիւնը ընդունելու ինչ կը նշանակէին այդ բռնի կրօնափոխութիւնները: Հաւաստաբապէս անպատուաբեր էին թէ՛ բռնադատողներուն եւ թէ՛ կրօնափոխներուն:

Հիւսէյին շահը, սրուն կ'ուղղուէին այդ խօսքերը, հասկցաւ այս ճառը, որ գուցէ շատ փիլիսոփայական էր իրեն համար. չենք զիտեր: Բայց զիտենք որ այս խօսքերը հասկցուեցան ան կերպով որ սարսափեցուցին Խապահանի արքունիքը: Շահը մտածեց թէ Օրիի ուղեկից 200 Մոսկովիները եւ Հայերը՝ Պարսկաստան արշաւելու պատ-

րաստ ուս զօրաբանակի մը յառաջընթաց հետազօտիչ ներն էին: Խորհրդաւոր գետպանին վրայօք խնդուխելազ գրոյցներ կը պատէին: Այս գրոյցները, Իսպահան բնակող Եւրոպացիներուն մէջ բերնէ բերան պտտելով, Հիւսէյին շահին վախը աւելցուցին: Միշէլ անուն Ֆրանսացի մը որ Հայաստանէն նոր եկած էր, վեհապետին սարսափը վերջին աստիճանի հասցուց՝ պատմելով թէ գրոյց կը պտտէր հոն «Հայաստանի թագաւորութեան» մերձաւոր վերահաստատման մասին, ձարին պաշտպանութեան ներքեւ: Իբր բարեգուշակ նշան մը կը նկատուէր Իսրայէլ Օրիի անուանը մէջ գտնուած ֆրանսերէն տառափոխութիւնը, Israël Or — il sera roy (Թագաւոր պիտի ըլլայ): Հիւսէյին շահը շուարած մնացած էր: Չարին գետպանը վճռեց չէր համարձակեր: Միւս կողմէ կը կռահէր թէ այդ մարդը լրտես մը ու վտանգաւոր թշնամի մըն էր: Իր ակարութեանը գիտակից, խոհեմութիւնը կարուկ որոշուէ մը նախամեծար համարելով, չար բարդին բարի երես ցուցուց, կրցածին չափ շոյից փայլալայց Իսրայէլ Օրին, առանձնաշնորհումներով ողոյցեց զանի եւ զեղեցիկ խոստումներով օրօրեց: Չարին գետպանը շահապիտութեանց ակորձը պահած էր իր վաճառականութեան ժամանակէն: Չէր անգիտանար թէ իր գիւանադէտի գիրքը իրեն թոյ կուտար Պարսկաստան մտցնել ամէն տեսակ ապրանք առանց ո եւ է մաքս վճարելու: Պարսիկ իշխանութեանց պաշտպանութեամբը եւ քաջալերութեամբը, լիւզի օգտուեցու իր պաշտօնին յատուկ առանձնաշնորհումներէն: Սովորական «պայուսակը» դարձաւ եղաւ ճշմարիտ սայլ մը, որչափ ատեն որ իր պաշտօնը տեսց Պարսկաստան: Հակերով ապրանք բերել կուտար Ռուսիայէն եւ Իսպահանի մէջ կը ծախէր խոշոր շահով: Օրի այդպէս մեծ հարստութիւն գիզեց շուտով: Գալով խաչակրութեան որուն նախաձեռնութիւնը ունեցած էր, անոր թուականը օր օրի կը յետաձգուէր: Պատերազմը, Եւրոպայի ամէն կողմը ճարակած, ոչ մէկ վեհապետի թոյլ կուտար լրջօրէն զբաղիլ այդ գործով: Վերջ ի վերջոյ, Օրի կ'երեսայ թէ համակերպեցաւ ասոր: Իր առեսուրին յաջողութիւնը եւ Պարսկաստանի մէջ վարած պերճ կեանքը մխիթարանք մը եղան իրեն: Մեծաւ Ասարախանի մէջ, 1710 ի եւ 1715 ի մէջտեղ, իրեն հետ գերեզման տանելով հայկական թագաւորութեան վեհաստատման յոյսը: Ինչ ալ ըլլայ Պ. Հիւսէյի կարծիքը, հասարակ խաբեբայ մը չեղաւ ինքը: Տարիներով, ընդհակառակը, շատ անկեղծօրէն՝ կը հաւատանք՝ յուսաց իր հայրենիքին վերականգնումը: Գոնէ այսպէս կը պնդեն Ս. Ղազարի Մխիթարեան հայրերը, այդ խճամիտ հրմուտները որոնց կարծիքը հայ պատմութեան խնդիրներուն վրայ՝ հեղինակաւոր է: Ապահովապէս, Իսրայէլ Օրի կը յուսար օգտուիլ իրերու նոր կացութենէն զոր յառաջ բերելու կը նկրտէր: Այդ գործին մէջ իր նախաձեռնութիւնը բոլորովին անշահախնդիր չեղաւ. բայց, կը կրկնենք, միեւնոյն ատեն ալ՝ ողորտը ջուրի մէջ ձուկ որսացող մը չեղաւ: Երկինք գետին իրար պիտի բերէ՛ր ու ամէն ար-

համարհոտ մերժումներու պիտի ենթարկէ՛ր ինքզինքը՝ եթէ ներշնչուած չըլլար գերագոյն աստիճանի զբացումը մը, եթէ իր հայրենակիցները ատելի լուծէ մը ազատած տեսնելու խորին իղձը չըլլար զինքը մղողը: Ու եթէ վերջ ի վերջոյ գործէն ձեռք բաշեց, չէ՞ մի որ յաջողելու բոլոր միջոցները ի զուր փորձէին ետքն էր ատիկա:

Օրիի մահուրէն մէկ քանի տարի հոքը, ձարը, որ վերջապէս շարժելու ազատութիւնը գտած էր, զործարութեան կը դնէր անոր յատակագիծը: Բայց ոչ մէկ եւրոպացի իշխան աջակից կ'անէր իրեն: Միայնակ յաղթել կ'ուզէր, որպէս զի միայնակ օգտուի յաղթանակէն: Դիւղակ բայց կարճ ու փառաւոր յաղթանակէ մը յետոյ, Հիւսէյինի յաջորդ Մահմաւ շահէն ստացաւ Պարսն, Տէրպէտը եւ ուրիշ կարեւոր նահանգներ:

**ՄՕՈՒՄ ՄԻՒՈՒ**

**Ժ Ա Մ Ա Ն Յ**

**ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ Պ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆԻ ՀԵՃ**

—Ուրեմն որչա՞՞մ ես անխնայ հարուածել բոլոր այստա ու բազմախնդիր անձերը:

—Այո՛, պարոն. ես ժողովրդի հարազատ զաւակ, պէտք է ընեմ՝ այդ բան: Արդէն այժմ պատարաստ ունիմ մի այլ տեսակի որ կը հրատարակուի քիչ օրէն:

—Ի՞նչ բանի վրայ:

—Այն խայտառակ Յիսուսի եւ Առաքեալ կոչուած առաներկու խաբեբայ ընկերներու մասին: Ան, պարոն, առաջ երբ Քրիստոսի պատկերը տեսնէի կ'ուզէի ամբողջ սիրտս իրեն նուիրել, հիմա բանտէն ելլելու ի վեր հասկըցայ ամէն բան... ափսո՛ս, ափսո՛ս որ այնչափ ատեն խարուեր ենք այդ կեղտոտներէն:

—Խօսէ՛ նայինք, կարելի է վշտից դարման մը կը գտնենք:

—Երբ ժընէլ կը գտնուէի՞ Պ. Ռուսոմ, Վահագ պ ե Արմէն Կարօ ինձ ցոյց տուցին Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի վաւերական գրութիւնները, որոնք ձեռք անցուցած էին: Այն ատեն կարծես մի մեծ տակառ սառ շուր լեցուցին զխուս: Ես ո՛չ աչքերուս եւ ո՛չ ականջներուս չէի հաւատար. ժամերով արտասուք թափեցի երբ լսեցի այդ ամէնը: Ի՞նչ, աս այն Յիսուսն էր որ այժմ իբրեւ Աստուած կը պաշտուի:

—Շատ զեղծութեան տեսար իր գործերուն մէջ:

—Ո՞ր մէկը ասեմ: Մատթէոս կը հաստատէ որ այդ խայտառակ հինգ նկանակով ու երկու ձուկով հինգ հազար մարդ կ'ըտացնէր ետքը, տակաւին տասներկու կողով լեցուն կատրուանք աւելցան. ո՞ր են այդ տասներկու կողով կատրուանքներու հաշիւները. ո՛չ մի տեղ գրուած կայ այդ մասին: Ուրիշ անգամ նորէն եօթը նկանակով ու քանի մը ձուկով շորս հաշար մարդ կերակրեր է եւ եօթը զամբիւղ լեցուն կատրուանք աւելցեց են, որ գումարելով

միտներուն վրայ, կ'ընէ սասնընը կողով: Ո՛ր է, կը հարցնենք, ի դիմաց ժողովրդին, մենք, ժողովրդի հարազատ ներկայացուցիչը, այդ կողմերուն հաշիւը.....

—Ատ է նէ՛ մեծ բան մը չէ:

—Իցի՛ թէ միայն առ ըլլար, հապա երկրամեան սուրբը հատուցանելու համար սուրբ Պետրոսի ձկին փորէն հանած զրահներուն հաշիւը: Ափսո՛ս, ափսո՛ս.....

—Մի՛ յուզուիր, պարոն ճանկիւլեան, մի՛ յուզուիր:

—Չի՛ յուզուիմ, միթէ կարելի՞ է ժողովրդի շահուն պաշտպան մի անձնուէր հերոսի համար չյուզուիլ: Այդ բազմաթիւ թաւազակ շորթեր է նաեւ Բեթփազէի դիմացի զեղը գանուած մի էջ, աւանակով միասին, սրպէս զի առք փառք Երուսաղէմ մտնէ.... ամէնքն ալ եսամոլ փառասերներ... Իրենց անձնական զձուձ շահուն ետեւէն զնացող: Գուկասի զրութին կը հաստատէ նաեւ Գեննեւսարէթի ծովակին վրայ կատարուած մի հրաշալի ձկնորսութիւն՝ սրուն արդիւնքը այդ Յիսուսը եւ Առաքեալ կոչուած երեք սուրբին սինըստներ, Սիմոն Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս բաժներ են մէջերնին, առանց հաշիւ տալու միւս ընկերներուն:

—Այս բաժներդ, իրա՛ւ, քիչ մը ծանր բաներ են:

—Հապա՛ այդ ազտոսի անբարոյականութիւններ... Ինք սր երեսանց բարոյականի քարոզիչ կը ձեւանար, այն լիտի կնոջ Մարթայի տուն կ'անցնէ եղբր իր ժամանակը և անոր քրոջ, մի անձանօթ արարածի, Մարիամին հետ... Բայց չեմ կարող ամէն բան ըսել, զրական բարոյականի սկզբունքներ կ'արգելեն ինձ: Ես քիչ ըսեմ՝ զուն շատ հասկցիր, սիրելի պարոն:

—Հիմա խնդիրը շատ ծանրացաւ:

—Դեռ այդ բան մը չէ: Այդ Յիսուսը, ո՞վ գիտէ ինչ ձիգութեամբ կ'անարքնորով հարուստ Զաքէոս մաքրապետի համակրութիւնը եւ վստահութիւնը կը շահի եւ անոր տան մէջ միշտ կը ճաշէ եղբր. եւ երբ մեր անկեղծ ընկեր փարիսեցիներ զիտողութիւն կ'ընեն իրեն, այդ կեղտոտը ձիգութեամբ կը պատասխանէ թէ՛ ինք առողջնութեամբ համար չէ եկած հոս, այլ հիւանդներու: Ախ, երբ Ղուկասի այդ պատմութիւն ցոյց տուցին ինձ Դասնակցական եղբայրներ, երկու ժամի չափ արտասուք թափեցի: Նաեւ բարձրաստիճան անձեր, ինչպէս Կուռնելիոս հարիւրապետ, Նիկիոյի մոս եւ Յովսէփ Արիմաթացի երես կուսան եղբր այդ ձիգութեամբ խաբերային:

—Ուրիշ բան ալ ցոյց տուին քեզի ժընէլի մէջ:

—Պարո՛ն, ի՛նչ ասել կ'ուզէք ձեր այդ խօսքով:

—Այսինքն ուրիշ ապացոյցներ, փաստեր, եւայլն:

—Հա՛ ասանկ ըսէք... այս՛, ցոյց տուցին նաեւ մի այլ կեղտոսի, սուրբ Պողոսի, մի նամակը Կորնթացիներուն զրուած, սրուն բնագիրը կը գտնուի Դաշնակցականներու պաշտօնատենակին մէջ: Գիտե՛ս ի՛նչ կ'ըսէ այդ խայտառակ անբարոյականը իր նամակին մէջ. «Միթէ մենք իշխանութիւն չունինք կնիկ մը մեր հետը պտըտցնելու, ինչպէս որ ուրիշ Առաքեալներ ու Տէրօջը եղբայրներ

ը ու կեփաս կ'ընեն:» կը տեսնա՛ս, պարոն, այդ հեթանոսաց Առաքեալը, այդ Աւետարանի քարոզիչը որ ժողովրդի զրամով կը ճամբորդէր, կ'ուզէ լիտի հոմանի մը պտըտցնել հետը: Ախ ափսո՛ս, ափսո՛ս, երկու ժամ արտասուք թափեցի նաեւ այս նամակին համար. կարծես իմ բաժինս եղած է միշտ արտասուք թափել ուրիշներու ըրածին համար: Կը մտածեմ որ գուցէ այդ արտասուքներ հաւաքուին ու պղտիկ շիշերու մէջ զրուելով վաճառուին իբրեւ «Պարոն Յարութիւն ճանկիւլեանի արտասուք» մի կարեւոր գումար կը գոյանայ, միայն թէ կը վստիւմ որ Եղիպատսի մէջ խայտառակ կոկորդիլոսներ մրցում կ'ընեն ինձ հետ: Բայց թողունք այդ խնդիր եւ անցնինք մեր պատմութեան թելին: Այդ նամակ կը հաստատէ նաեւ իմ կատկածներ մի քանի ուրիշ Առաքեալներու եւ Ս. Պետրոսի մասին, որովհետեւ Ս. Պետրոսի կեղծանունը Կեփաս է եղբր, ինչպէս Ռուստոմ եւ Արմէն Կարօ հաստատեցին մեր ժընէլի մէջ գումարած յունիս Ա կիրակի օրուան ընդհանուր ժողովին մէջ:

—Ալ բարբոսի համոզուեցոյ: Մակայն բնա՛ւ շնորհով մարդ չի կայ եղբր այդ ազտոսներուն մէջ:

—Ափսո՛ս, ափսո՛ս, պարոն, միայն երկու հոգի. մեր անկեղծ ընկեր Յովհաննէս Մկրտիչ, — չշփոթես, ինչքեմ, Մկրտիչեանի հետ, — որ միմիայն մարտիով փորը կը կշտացնէ եղբր, և այն խայտառակ Յիսուսի հայրը, բարոյականի սէր Յովսէփ՝ որ նոյն իսկ իր հարազատ կնոջ հետ յարաբերութիւն չէ ունեցեր: Թէեւ այդ մի քիչ անհաւատալի թուեցաւ ինձ, բայց Պ. Ռուստոմ պնդեց որ այս բանը հաստատող ստորումաններ ունին իրենց պաշտօնատենակին մէջ:

—Ազէ՛կ, պարոն ճանկիւլեան, հիմա ինչպէ՞ս պիտի դարմանես եղած փստը:

—Անգամ մը որ տետրակի հրատարակուի եւ ընդհանուր աշխարհ իմանայ այդ կեղտոսներու վարչելի ընթացքը, մի «բաց նամակ» պիտի ուղղեմ խրիմեան Հայրիկին, Օրմանեան պատրիարքին, Հոսմի պապին, Յունաց Կոստանդիանոս պատրիարքին եւ պիտի հրաւիրեմ զիրենք որ հրաժարին և չժառայեն այդ ԱԳ-ԱՅ անբարոյական խայտառակ ազտոսներու հաստատած կրօնքին, եւ ընդհանուր քրիստոնէական միութիւն մը կազմուի պատուաւոր եւ հարուստ անձերէ: Մնաց բարբոս, սիրելի պարոն:

—Քիչ մըն ալ նստէ՛:

—Ո՛չ, պէտք է գնամ Քրէտի Լիոնէի Պանքը եւ, իբրեւ ժողովրդի հարազատ ներկայացուցիչ, հաշիւ պահանջեմ. որովհետեւ կը կատկածիմ որ այդ կեղտոսներ իմ բանտարկութեանս միջոցին կանոնաւոր հաշուետուար չեն բռնած... ափսո՛ս, ափսո՛ս.....

### ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ սուլթանը ներում չ'որհեր է Բաղէշի մէջ բանտարկուած 30 Հայերու ե կը կարծուի թէ իր գահակալութեան արեգարձին առթիւ (31 օգոստոս) ուրիշ բազմաթիւ հայ բանտարկեալներու ալ ներում պիտի չ'որհուի:

Այդ խեղճերը բանտէն ելլելուն՝ ինչ բաղդ կը սպասէ իրենց:

Վիեննայէն օգոստոս 27 թուականով հեռագիր մը կը ծանուցանէ թէ, հոն նոր հասած տեղեկութեանց հասցելով, օգոստոս 20 եւ 21 կիրակի եւ երկուշաբթի՝ Մուշի եւ Բաղէշի մէջ նոր ու ծանր շարքեր տեղի ունեցեր են: Մանրամասնութիւններ կը պակսին: Մի խաբել կ'ուզուի կոր, մէկ կողմէ շարքերը շարունակուելով եւ միւս կողմէ բանտերու մէջ խճողուած անմեղներ տմիսներ հաբը տրձակելով, եւ ասիկա ի ձայն թմբկի եւ փողի Երոսպայի ծանուցուելով:

—Արշակ Զօպանեան կը շարունակէ հայ ցեղը ե իր կատարած դերը Ֆրանսայի մէջ ճանչցնելու այնքան կարեւոր գործը: «Ռըվի Անտիքլորէաիք»ի օգոստոս 27ի թիւը հրատարակած է իր ուսումնասիրութիւնը Հայոց հին գրականութեան մասին: Յօդուածը երկրորդ մաս մըն ալ պիտի ունենայ՝ Հայոց նոր գրականութեան նշումներու:

—Փլէմանոս, որ հայկական դատին ամենէն յառաջընթաց ու ամենէն եռանդուն պաշտպաններէն մին եղաւ Ֆրանսայի մէջ, «Օտոս»ի օգոստոս 29ի թիւին մէջ նորէն կը դառնայ մեր շարքերուն: Նոյն այն դրութիւնը, որով այսօր անմեղի մը (Տրէֆիւս) համար արդարութիւնը պահանջողներուն ձայնը իղզի կ'աշխատուի, նոյն այն դրութիւնը իգործ դրուեցաւ Ֆրանսայի մէջ՝ Հայերուն, այդ «խաղաղ, խելացի, աշխատասէր, քաղցրաբարոյ» մարդոց ցաւի աղաղակները իղզելու համար:

### ՌՈՒՍԻՈՅ ՀՐԱԻԷՐԸ

Կարելի չէ ըսել թէ ոչ մէկ ատեն եղելութիւն մը այնքան յանկարծակիի բերած էր մարդիկը, որքան Ռուսիոյ կայսեր ամէն պետութեանց ուղղած հրակերը՝ զեսպանա-

խորհուրդ մը գումարելու եւ զէնընկեցութեան ու ընդհանուր խաղաղութեան միջոցներուն վրայ խորհելու: Այդ տեղոյն երիտասարդը, հիւանդ ոչնչականի բարակ դէմքով եւ մեղամաղձիկ աչքերով, որուն համար կ'ըսեն թէ միամիտ ու բարի հոգի մըն է, յանկարծ մէջտեղ կը նետուի, ամենէն չսպասուած վայրկեանին, ու առաքելի խօսքերով, նոր աւետարան մը քարոզելու հաւատացեալի մը ներշնչմամբ, կ'ափսոսայ սպառազինման տակ հեծող ժողովուրդներուն ոյժի եւ բարօրութեան փճացումը, եւ կը բաղձայ, քսաներորդ դարուն սեմին վրայ, բացումը նոր թուականի մը որ «Պետութիւնները անկեղծօրէն աշխատին յաղթանակել տալու տիեզերական խաղաղութեան մեծ ըմբռնումը»:

Ռուսիայէն, բիրտ ոյժի եւ ամէն իրաւունքներու ուրացման եւ անյադ ցանկութիւններու երկրէն է որ ամենէն աւելի քիչ կը սպասուէր այսպիսի հրակերի մը, եւ ատոր համար է որ իր առաջ բերած ապաւորութիւնը սաստիկ է:

Հիմակ, ամէն երկիրներու մամուլը եւ հանրային կարծիքը զբաղած է այդ հրակերին արժէքը եւ ազդեցութիւնը քննելու: Ու սակաւաթիւ չեն անոնք, մանաւանդ ամենէն աւելի կորովամիտներուն մէջ, որոնք հարկ կ'ըլլան մեծարանքը ընծայելով հանդերձ այդպիսի բաղձանք մը թելադրող զգացումներուն աղնուութեանը, կը տարակուսին անոր՝ եթէ ոչ անկեղծութեանը՝ զոնէ ո եւ է օգտակար շօշափելի արդիւնք մը առաջ բերելու անկեղծութեանը:

Չէնընկեցութիւն, ընդհանուր խաղաղութիւն, ինչ զեղեցիկ խօսքեր, ինչ վսեմ առաջադիւթիւններ: Ա՛հ, եթէ միեւնոյն ատեն ձայն բարձրացուէր նաեւ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ տիրապետութեանը համար ալ, զրկեալներուն ու հարստահարեալներուն մարդկային էն տարրական իրաւունքներուն ապահովացմանը համար ա՛լ:

Ռուսիոյ կայսրը, — իր անկեղծութեանը տարակուսելու նախաախնքը չենք ըներ իրեն, — զեղեցիկ երազ մը տեսնելու վրայ է: Սպասենք իրականութեանը:

Քայց, չմտնանք որ, հաշուեյարդարութեան ատենը, մենք ալ ձայն մը ունինք բարձրացնելիք:

### Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

